



ԹՈՎԱՆՆԱԿԱՆՈՒՄ

Խմբագրական

Մանկանց կերակրորեայ դպրոցը

Գ. Գ. Խ.

Հոգ. կեանք

Աստուծոյ սրբիները

Հոգեկան ախտեր

Աստուծոյ տանող համբան

Ա. Օ. Փափազեան

Թարգ. Վեր. Յ. Եղիազարեան

Կենաց ածուներէն

Զարմանալի ոճագործ մը

Աւազակայեանի մը դարձը

Աստուծոյ գործին համար դրամ

Սերտոցուծիւն

Անապատի խորանը՝ Քրիստոսի օրինակ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Յովհաննէս Առաքեալ

Գ. Գ. Խաչիկեան

Ո՞րն է Սուրբ Գրոց մեծագոյն գլուխը

Խանկանց սիւնակ

Երկու եղբայրներու պատմութիւնը

Հասկաբազ

Abstract


Թուրքերն ունի 8 էջ ո՛ր՝ Թէ Դպերէնին Թ ա ռ Ի հանու Թիւնը այլ տարրեր բովանդակութեամբ : Այս պարագան գիւրտութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ : Թուրքերէն մօտիկ պատասխա-
նատու խմբագիրն է՝

18728119082102991133

— 2 —

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Աւրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1955

ԹԻԻ 11

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Ով որ աշակերտ աղայ մը կ'ընդունի Իմ անունովս
ըն ի կ'ընդունի Մատթ ԺԸ. 5

«Բանբեր»ի Օգոստոսի թիւով ջանացիւք
ցուցնել՝ մեր ապագայ սերունդին սպառնացող
վտանգը եւ մատնանշեցիւք թէ ի՞նչ կրնան ը-
նել հաւատացեալ ծնողքներ՝ այդ չարիքին առ-
ջէն անհետելու համար:

Բայց դժբաղդաբար ահարկու է վտանգը,
քանզի վերջին օրերու չար ժամանակները ար-
դէն եկած են (Բ. Տիմ. Գ. 1-5), անբարոյիկ ու
ամբարիշտ կեանքը իբր վայրագ հեղեղ մը՝
փոքրիկներն ալ իր մէջ առած է եւ քարէ քար
կը զարնէ: Իրենց հոգեհաստորները այդ հոռան-
քէն ազատելու եւ քրիստոնէական ոգով դաս-
տիարակելու նպատակաւ հաւատացեալ հայրե-
րուն ու մայրերուն թափած ջանքերը թէն շատ
գործ կրնան կատարել, սակայն առանձինն կա-
րող չեն հեղեղին առջէն թուժք կանգնիլ. մանա-
ւանդ որ՝ տնտեսական հիւանդագին պայմաննե-
րու բերումով մայրերու ալ մեծամասնութիւնը
իր կեանքը գործարաններու մէջ կը մաշեցնէ եւ
ժամանակ ու տրամադրութիւն չունի իր զաւակ-
ներով զբաղելու: Ոեւէ կնոջ, մասնաւորաբար
տարագրութեան պատճառաւ կըթուլթենէ զրկե-
լած դժբաղդ հայուհւոյն համար՝ շատ դժուար է
երեք պաշտօն միանգամայն կատարել. — ըլլալ
թէ՛ ամուսին, թէ՛ գործարանի աշխատաւորուհի
եւ թէ՛ զաւակներու մայր ու դաստիարակ: Բիչ
բացառութեամբ՝ մին կամ միւսը թերի պիտի
կատարուի, եւ ո՞րը... անշուշտ մանուկներու
դաստիարակութիւնը, քանի որ այդ զանցառու-
թեան պատիժը ամենէն ուշը կուգայ:

Ուստի պէտք է ծնողքը ձգել միմեկի, պէտք
է այդ դժուարին, բայց վսեմ գործին մէջ եկե-

ղեցին անոնց օգնութեան ձեռք կարկառէ՝ կազ-
մակերպելով մանուկներու եւ պատանիներու
համար կիրականօրեայ մասնաւոր պաշտամունք:
Փոքրիկները չափահասներու համար ձեռուած
քարոզածողութներէն չեն կրնար բան մը հասկը-
նալ: Եթէ ստիպուած անոնց յաճախեն, շուտով
պիտի ձանձրանան եւ իրենց բնական կրակո-
տութիւնը զիրենք չարաճճութեան պիտի մղէ:
Իսկ եթէ ծնողաց սպառնալիքէն եւ խոստումէն
դրդեալ լուռ եւ հանդարտ ալ մնան — որ զրե-
թէ անկարելի է — ատկէ ալ ուրիշ չարիք մը
կրնայ ծագիլ. — անոնց մէջ ունակութիւն կը
դառնայ ժողովներու երթալ՝ ոչ թէ մտիկ ընե-
լու, բան մը ըմբռնելու եւ հոգւով զԱստուած
պաշտելու նպատակաւ, հապա միայն եկեղե-
ցւոյն մէջ ներկայ գտնուելու դիտումով: Ամէն
խոհուն ընթերցող կրնայ ըմբռնել թէ ատով
ի՞նչ ահեղի քանդում յառաջ կուգայ ման-
կան հոգւոյն մէջ:

Այդ չարիքը կանխելու համար՝ եկեղեցին
պէտք է ամէն տեղ հաստատէ կիրականօրեայ
դպրոցներ, ուր մանուկներու հետ պէտք է խօ-
սիլ իրենց լեզուովը, եւ զանոնք առաջնորդել
Քրիստոսի՝ նկատողութեան առնելով անոնց սե-
փական ըմբռնումը, զարգացումը եւ ձգտումը:

Ա. Ուսուցիչը. — Ասիկա պէտք է ունենայ.
— 1. Կենդանի հաւատք: Քրիստոնէութիւնը հա-
ղորդութիւն է Աստուծոյ հետ՝ Յիսուս Քրիստոսի
միջոցաւ: Եթէ ուսուցիչը չունի այդ հաղորդու-
թիւնը — ուրիշ խօսքով հոգեւոր կեանքը — չի
կրնար զայն փոխանցել իր աշակերտներուն:
Կրնայ անոնց շատ լաւ սորվեցնել Սուրբ Գրոց
պատմութիւններն ու համարները եւ քրիստո-
նէական վարդապետութիւնները, սակայն չկրնար

զանոնք յարաբերութեան մէջ դնել Անոր հետ, Որ կեանք է, եւ կեանք կը պարգեւէ, կրնայ լուսինին պէս լոյս տալ, բայց ոչ նաեւ ջերմութիւն՝ արեւին նման: Գերմանիա ճանչցայ վարժապետանոցի ուսուցիչ մը, որ իր աշակերտներուն կուտար Սուրբ Գրական ճշմարիտ գիտելիքներ, բայց ատով զանոնք Յիսուսի առաջնորդելու տեղ՝ Անկէ կը վանէր, քանզի միայն մաքի հաւատք ունէր, սակայն ոչ նաեւ սրտի հաւատք՝ կեանք: Հեռի՝ մեր կիրակնօրեայ դպրոցէն այդպիսիները: Ընդհակառակն պէտք է մենք զայն յանձնենք միայն այն ուսուցչին, որ իր սրտին խորքին մէջ ապրումն ունեցած է թէ՛ Քրիստոսի մահովն եւ յարութեամբ է որ ինքը կեանք ունի, որ զԱյն ընդունած է իբր Տէրն ու Փրկիչը եւ սրուն ներսիդին Անոր Հոգին կը հոսի իբր կենդանի Զուրի գետ մը եւ իր միջոցաւ կեանք կ'արտադրէ նաեւ աշակերտներուն մէջ:

2. Ուսուցիչը պէտք է լեցուած ըլլայ գորովալից սիրով հանդէպ իրեն յանձնուած աշակերտները. անոնց ուրախութիւնն ու վիշտը պէտք է իրը նկատէ եւ անոնց տառապանքի ատեն ինքն ալ տառապի. եթէ անիկա տէրն է այդ սիրոյ հոգիին, չպիտի կրնայ գոհանալ իր կարգի մասնակներով զբաղելու միայն կիրակնօրեայ դասի պահուն, հապա պիտի այցելէ նաեւ անոնց տունները, քաջալերէ զանոնք անոնց հիւանդութեան եւ ուրիշ նեղութեան պարագային ու բարեկամական յարաբերութիւն հաստատէ անոնց ծնողաց հետ՝ զանոնք ալ հետաքրքրելու համար իրենց փոքրիկներու հոգեւոր կեանքով: Ամէն մարդ գիւրաւ կրնայ ըմբռնել թէ կիրակնօրեայ դպրոցի նպատակին համար որքա՞ն օգտակար է այդպիսի մտերիմ, սիրալից յարաբերութիւն մը՝ մէկ կողմէ ուսուցչին, եւ միւս կողմէ աշակերտներուն եւ անոնց ծնողաց միջեւ:

3. Ուսուցիչը պէտք է սիրտն ունենայ իր աշակերտները Աստուծոյ ներկայացնելու ազօթքով: Ամէն բան անգործ մարդուն մէջ ծնելու հաւատք առ Քրիստոս, սուրբ երկիւղածութիւնն ու երախտագէտ սէր Առ Աստուած, եւ ճշմարիտ քրիստոնէական կեանք, եթէ Սուրբ Հոգւոյն ուղղակի ներգործութիւնը չըլլայ. «Մէկն ալ չի կրնար Յիսուսը Տէր կոչել, եթէ ոչ Հոգւով Սըրբով» (Ս. Կոր. ԺԲ. 3): Ուստի կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչը յաճախ, — եթէ կարելի է ամէն օր — թախանձազին ազօթքով Տէրոջը առջեւ բերելու է իր բոլոր աշակերտները մէկիկ մէկիկ, ինչպէս քահանայապետը կ'ընէր Իսրայէլի 12

ցեղերուն համար: Միայն այդ է միջոցը ստանալու խոստացեալ Սուրբ Հոգին եւ Անով վստահ ըլլալու թէ «մենք Աստուծոյ որդիներն ենք» ու կանչելու «Աբբա Հայր» (Հռով. Ը. 15, 16): Այս անփոփոխելի ճշմարտութիւն է, ինչպէս մեծերու նաեւ փոքրիկներու համար: Որքա՞ն յաճախ եւ ինչպէ՞ս կ'ազօթենք մեր կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն համար: Եթէ թոյլ ու անտարբեր ենք այս կէտին մէջ, տեւական արդիւնք չսպասենք մեր աշխատանքէն:

Եթէ կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչը կը գործէ այս երեք պայմաններուն համաձայն, ապարդիւն չպիտի ըլլայ իր աշխատանքը, Տէրը պիտի օրհնէ զայն, սակայն օրհնութիւնը աւելի ճշիւ պիտի ըլլայ, եթէ նկատողութեան առնուին հետեւեալ

Բ. Երկու մանկավարժական կանոնները. — 4. Մեր կիր. դպրոցի դասերուն առանցքը կազմելու են Ս. Գրոց պատմութիւնները: Ասոնք թէ՛ դիւրահասկնալի են եւ թէ ամենէն աւելի կը նըպաստեն կրօնական զգացման ու կեանքի զարգացման: Ըսինք, կրօնը կենդանի հաղորդութիւն է Աստուծոյ հետ, կեանք է: Եւ այդ պատմութիւնները՝ մանկան թանձրացեալ ու պայծառ կերպով կը ցուցնեն թէ ի՞նչ է այդ կեանքը, ի՞նչ է Աստուծոյ հաճելին ու զգուհին, ի՞նչ է աստուածավախութիւնը, հաւատքը ու սէրը, ի՞նչ է մեղքը, ամբարտաւանութիւնը եւ անհաւատութիւնը, ո՛ւր կը տանին մոլութիւնն ու առաքինութիւնը եւն. եւայլն: Մանուկը այս ամէնը կը տեսնէ իրեն ներկայացուած պատմական անձերու մէջ, կ'ոգեւորուի անոնց հետ, իր մէջ զըզւանք կ'արթննայ չարին հանդէպ, եւ սէր՝ դէպի բարին ու դէպի Աստուած:

Բայց որպէսզի Սուրբ Գրոց պատմութիւնները կարենան այդ օրհնաբեր ներգործութիւններն ունենալ, պէտք է ուսուցիչը զանոնք պատմէ այնքան պարզ ու յստակ լեզուով, դէմքի ու աչքի այնքա՞ն կենդանի արտայայտումով, այնքա՞ն վառ գոյներով եւ այնքա՞ն խոր ըզգացումով, որ աշակերտաց հոգւոյ աչքերուն առջեւ Աբրահամը, Յովսէփը, Հոռութը, Դաւիթը, Պողոսը եւն. մանաւանդ խաչեալ Քրիստոսը, վերակենդանանան, խօսին անոնց սրտերուն եւ արթնցնեն անոնց մէջ պատմութեան հերոսին զգացումն ու ձգտումը, եւ մղեն զանոնք հաւատքի ու ճշմարիտ երկրպագութեան: Այս մասին բուն իսկ առաքեալներէն կրնանք օրինակը առնել. անոնց յաջողութեան մէկ գաղտնիքն ալ այն էր որ, անոնք Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբ

թեան տակ ընտիր պատմողներ եղան. անոնք այնքան լաւ կը նկարագրէին Յիսուսի չարչարանքը որ ունկնդիրները իրենց աչքերուն առջեւ Քրիստոսը խաչը ելած կը տեսնէին: (Տեա Գաղ. Գ. 1):

Այս բանին մէջ պիտի յաջողի նոյնիսկ պատմելու միջակ կարողութիւն ունեցող անձը, եթէ ան հետեւի Սուրբ Գրոց պարզ, պատկերաւից եւ հրապուրիչ ոճին: Սակայն աս չնշանակէր թէ բառ առ բառ Աստուածաշունչէն փոխ առնելու է: Այդպէսով տաւր տարեկանէն վար աշակերտներու յաճախ չպիտի կրնանք բան մը հասկցնել: Ուստի Սուրբ Գրոց ոգին ու իմաստը պահելու պայմանաւ թուլատրելի է՝ պատմելու ատեն ընել բացատրական յաւելումներ եւ նրկարագրութիւններ, որոնք կը կարողացնեն մանուկն ու պատանին՝ աւելի զիւրաւ թափանցելու պատմութեան ոգւոյն խորը:

2. Պէտք է հարցումներով առաջնորդել աշակերտները՝ անձամբ գտնելու ներկայացուած պատմութեան մէջ ծածկուած բարոյական ու կրօնական սկզբունքները, զանոնք աւելի լուսաբանել ու խորունկցնել՝ մէջ բերելով յարմար օրինակներ մանուկներու կեանքէն եւ կամ դուրսէն պատմութիւն մը պատմելով: Որպէսզի այդ գտնուած սկզբունքը աշակերտներու մնայուն ըստացուածքը դառնայ եւ իրենց կեանքի ուղղութիւն տայ, անոնց զոց սորվեցնելու է զայն խտացնող ռակեղէն համար մը: Օրինակ, Աբրահամի ու Դովտի բաժանումը պատմելէ յետոյ, հարցումներով մղելու է աշակերտները գտնելու թէ խաղաղութիւնը կը պահուի անձնագոհութեամբ. ետքը իրենց կեանքէն այլեւայլ պարագաներ յիշելով՝ ցուցնելու է թէ անոնք երբ եւ ինչ գոհողութիւն պէտք է ընեն խաղաղութիւնը պահելու համար: Ապա բացատրելու եւ զոց սորվեցնելու է, «Երանի խաղաղութիւն ընողներուն, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» համարը (Մատթ. Ե. 9):

Այս երկրորդ կէտն ալ խիստ կարեւոր է, քանզի պատմելու ատեն աշակերտին մէջ արթնցած բարոյական ու կրօնական զգացումներն ու փափաքները թէեւ թանկարժէք են, բայց վըտանգ կայ որ շուտով անհետին, նմանին այն սերմին, որ ապառաժուտ տեղի վրայ, ծանծաղ հողի մէջ ինկած էր. թէեւ շուտ մը բուսաւ, բայց արեւին ծագած ատենը այրեցաւ, չորցաւ (Մատ. ԺԳ. 5, 6): Ուստի հիմ բռնելով պատմութիւնը եւ օգտուելով արթնցած զգացումներէն, անհրաժեշտ է առաջնորդել աշակերտին՝

գտնելու սկզբունքներ, կազմելու հաստատուն համոզումներ եւ մանաւանդ կիրարկելու զանոնք իր գործնական կեանքին մէջ:

Շատեր մի քանի տասնեակ տարիներ եկեղեցի յաճախելով եւ շատ մը լուրջ հոգեւոր քարոզներ լսելով ու անոնցմէ յաճախ զգացուելով հանդերձ՝ դեռ այսօր ալ իրենց դուրսի կեանքին մէջ հեթանոսի պէս կ'ապրին. վասնզի իրենց լսածին վրայ խորհած ու հաստատուն համոզման մը եկած չեն, իրենց խղճի խայթին ու ազնիւ զգացումներուն հետեւած չեն, հապա այդ ամէնը եկեղեցւոյն մէջ ձգած ու դարձեալ պարապ դուրս ելած են:

Մեր աշակերտներէն հօռի՝ այդպիսի արգաստելի կեանք մը, անոնք սորվելու են խորհիլ, համոզումներու տիրանալ եւ Աստուծոյ օգնուելով թեամբ դուրսի կեանքի մէջ ալ ապրիլ քրիստոնէական սկզբունքներու համաձայն: Օրինակ, երբ անոնք հիացումով ու արցունքոտ աչքերով լսած են Յովսէփի պատմութիւնը, առաջնորդուելու են որ իրենք ալ ներեն, ինչպէս անիկա ներեց. իրենք ալ վստահին ու հնազանդին Աստուծոյ, ինչպէս անիկա ըրաւ՝ իր կեանքի ամենէն մութ եւ անիրաւուած օրերուն:

Գ. Ինչպէ՞ս կարելի է կիրակնօրեայ դպրոցը հրապուրելի դարձնել. — Մեր սիւնակները չեն թուլատրեր այս կէտին վրայ երկար գրել. բայց հարկ ալ չկայ: Եթէ դպրոցը կը կառավարուի վերոյիշեալ ոգիով ու սկզբունքներով, արդէն ունի հարկ եղած քաջողական ոյժը, սակայն հրապուրը աւելի զօրացնելու համար կրնանք բաժնել պատկեր ու սարքել հանդէսներ ալ: Առաջինները ոչ միայն կ'ուրախացնեն մանուկը ու կը կապեն զայն դպրոցին, հապա ունին նաեւ կրթական արժէք, — կը գրգռեն երեւակայութիւնը, կը զօրացնեն հետաքրքրութիւնը եւ պատմութեան անձին դիմագիծը աւելի խոր կը դրօշմեն փոքրիկին միտքին մէջ:

Իսկ հանդէսը, որ տարին միայն մէկ անգամ Ծնունդի ատեն տեղի ունենալու է, կը զօդէ աւելի մտերիմ կապերով աշակերտը ու ծնողը՝ դպրոցին եւ կը մղէ մանուկները՝ աւելի լաւ սորվելու իրենց երգերն ու Սուրբ Գրոց համարները, միայն պէտք է աշխատիլ որ փոքրիկներու բռնական ու անմեղ փառասիրութիւնը հետգհետէ մեղմանայ եւ հանդէսները ձանձրալիօրէն երկար չըլլան: Պէտք է ջանալ որ հանդէսը միջոց մը ըլլայ Քրիստոսի հրաւիրելու ուղադրութիւնը այն ծնողաց, որոնք ուրիշ առիթներու տակ եկեղեցի ոտք չեն կոխեր:

Աստուծոյ զատ աշակերտները կիրականորեայ դպրոցին կապելու լաւ միջոց մըն է պարբերական պատոյտներ: Մենք պարտական ենք մեր մասնակները երբեմն պատոյտի տանիլ, քանզի դժբաղդ ծնողքը յաճախ ամիսներով չեն կրնար իրենց փոքրիկները դուրսը մաքուր օդի մէջ առաջնորդել:

Այս ամէնը կարգալէ յետոյ թերեւս ծնողքներու եւ կիրականորեայ դպրոցի ուսուցիչներու, ուսուցչուհիներու սրտէն խոր հառաչ մը թռչի. — «Ո՞վ բաւական է այս ամէնուն, ի՞նչպէս կրնանք հաւատարմօրէն հետեւիլ անոնց»: Այո, սիրելի եղբայր ու քոյր, սիրելի սրտցաւ քրիստոնեայ, դժուար է պարտականութիւնը: Սակայն ինչպէս գրեցինք Օգոստոսի խմբագրականին մէջ եւ այս յօդուածին սկիզբը, մենք մեծ վտանգի մը առջեւ կը գտնուինք: Մեր սրտահատորները շրջապատուած են այնպիսի տարրերով, որոնք զիրենք զէպի դժոխք տանիլ կ'ուզեն: Մեզմէ ո՞վ չպիտի զոհէր իր ամէն ինչը, նոյնիսկ անձը հրդեհուած տան մը մէջէն իր զաւակը ազատելու համար: Զա՞րժեր որ մեր մարմնի, մտքի եւ հոգւոյ բոլոր ուժերը լարենք՝ մեր փոքրիկները ազատելու համար յաւիտենական գեհեանէն: Զվախնանք, աւելի մեծ է Անիկա Որ մեր մէջ է, քան թէ անիկա որ աշխարհի մէջ է: Ան մեզի հետ է ամենէն աւելի մեր զաւակները իրեն համար շահելու աշխատանքին մէջ. բաւական է միայն որ մենք իր օգնութիւնը խնդրենք թախանձազին եւ մեր պարտականութիւնը կատարենք հաւատարմօրէն, մնացածը իր գործն է եւ ինքը զայն ի կատար պիտի հանէ փառաւորապէս:

Գ. Գ. Խ.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆԵՐԸ

Տեսայ Կայէնը. իր վայրագ նայուածքը մարդասպանութիւն կը ցոլացնէր. ձեռքերը արիւնով կարմիր էին եւ Աստուածային վրէժխնդրութիւնը զայն կը հալածէր անոր յիմար փախուստին մէջ: Կայէն, ո՞վ էր ան:

Նա որդի մըն էր, եղբայր մըն էր: Ադամի որդին, Աբելի եղբայրը: Ինքն ալ Աստուածապաշտութեան փորձ մը ըրած էր, բայց առանց իր հին բնութիւնը ձգելու՝ նա մարմնաւոր պաշտամունք մըն էր մատուցած: Մարմինն պտուղները՝ նախանձը եւ ատելութիւն ցանաձ էր եւ մար-

դասպանութիւն ու ապականութիւն հնձած: Տեսայ Կայէնի սերունդը եւ անոնց մէջ անսուրբ Եսաւը, որ աւելի նախընտրեց իր մարմնի ախորժակները գոհացնել քան թէ հոգեւոր առանձնաշնորհումները պահէր: Անոր սրտին մէջ կարգացի ատելութիւնն ու ռիւր իր եղբոր Յակոբի հանդէպ, անոր՝ իր տեղ հայրական օրհնութիւնը առած ըլլալուն համար:

Սուրբ Գրոց էջերուն մէջ կարգացի պատմութիւնը մարմնի ցանկութեան գերի անձերուն, անոնց քայլերուն միշտ թոյն կ'ընկերանար, անոնք ուրկէ որ անցնէին իրենց ետեւ աւերակներ կը թողուին: Ուսեալ մարդիկ թերեւս, բայց իրենց առած ուսմունքը իրենց սիրտը չէր փոխած: Միշտ կրօնասէր մարդիկ, բայց անոնց կրօնքը իրենց կեանքը չէր փոխակերպած: Անոնք սա փարիսեցիներն են որ Իսրայէլի փառամոլութիւնովը զգեստաւորուած՝ ըսին Նազուրէցիին, «Չենք ուզեր որ ատիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ», «Մենք Աբրահամի որդիներ ենք»: Ատելութեան սերմնացաններ, անվստահութեան խմորը տարածողներ, անապարձ եւ գոռոզ մարդիկ. անոնք Յիսուսի կեանքին լրտեսներն էին եւ կը փնտռէին Անոր վրայ յանցանք գրտնել: Որդին Մարդոյ կատարեալ սրբութեան կեանքին առջեւ երբ անկարող ու յաղթուած էին՝ անոնք սուտ վկանք գտան զԱյն Պիղատոսի մատնելու եւ սպաննել տալու: Ծեփած գերեզմաններ, որոնք գառնուկի մորթ հագած էին բայց ներսէն յափշտակող չար գայլեր էին:

Աւա՛ղ, Կայէնի ոգին իր տիրապետութիւնը դեռ չէ վերջացուցած: Նա գորաւոր դաշնակից մը ունի յանձին ապականած եւ ապստամբ հին մարդուն, նա օրինաց ու կանոնի կը մտնէ անսուրբ քրիստոնեաներու մարմնաւոր բնութեան մէջ:

Անձնասէր ոգի՝ որ կ'սպաննէ, ուրիշները իր անձնական շահերուն զոհելով:

Հպարտ եւ գոռոզ ոգի՝ որ կ'սպաննէ, իր ընկերը ոտքի տակ կոխկռտելով:

Փարիսեցիական ոգի՝ որ կ'սպաննէ, իր զըրպարտիչ եւ չարախօս լեզուովը:

Նախանձոտ ոգի՝ որ կ'սպաննէ, իր քմահաճ եւ յիմարական փափաքներովը:

Անսուրբ ոգի՝ որ կ'սպաննէ, իրեն հետ յարաբերողները ապականելով կամ զանոնք գալթակղեցնելով:

Մարդասպան ոգի՝ որ կ'սպաննէ, իր դառնութեան եւ չարութեան խմորովը:

Այո, տեսայ մարմնաւոր քրիստոնեաները:

Տեսայ անոնց գործքերը — խաւարի գործեր:

Տեսայ անոնց պտուղները — ապականութեան պտուղներ:

Տեսայ անոնց հունձքը — մահուան հունձք:

Եւ ի տես Աստուծոյ գործին որ անոնց պատ-
ճառաւ փառաւ իւր իւր լացի:

Եւ ի տես Աստուծոյ եկեղեցիին՝ կտոր կտոր
բաժնուած, բռնադատուած եւ տկարացած անոնց
կասկածի եւ օձային ոգիով... եւ լացի: Եւ լացի
ի տես Քրիստոսի մարմինին սպառած (Գաղ. Ե.
15) ու պատառ պատառ եղած նոյնիսկ անոնց
կողմանէ որոնք պէտք էին զիրար սիրել եւ ի-
րարու օգնել՝ բայց փոխանակ ասոր իրար կը
խաճնեն եւ կուտեն. եւ իմ Աստուծոյ աղաղա-
կեցի, «Քու սուրբ Անունդ, ով իմ Աստուծս,
պիտի միշտ պղծուի. Քու սիրելի Որդւոյդ մար-
մինը միթէ ապականութիւն պիտի տեսնէ: Եթէ
ոչ, ո՛ւր են սուրբերը ու յաղթողները որոնք Ա-
նոր անդամները ըլլալու են: Քու սիրած ու անոր
համար անձը մատնած եկեղեցիդ երբեք կատար-
եալ պիտի չըլլա՛յ սիրոյ կապովը (միաբանու-
թեան մէջ): Տէր, հիմա ունեցած տեսիլքս զիս
ցաւով ու տրամուլթեամբ կը լեցնէ: Ուրեմն Դուն
պարա՛պ տեղը Քու կեանքդ ամենուն համար
փրկանք տուիր: Պարա՛պ տեղը սիրելով քուկի-
նեդ, մինչեւ վերջն ալ սիրեցիր զանոնք: Քու
արինդ պարա՛պ տեղը թափուեցաւ: Պարա՛պ
տեղը միթէ փռելը պսակեցին ու զարգարեցին
ճակատդ ու գամերը ծակեցին ձեռքերդ ու ոտ-
քերդ: Քու խօսքդ պարա՛պ էր ուրեմն խաչին
վրայ թէ «Ամէն բան կատարուեցաւ»: Քու խոս-
տումներդ պարա՛պ են թէ Քեզի հաւատացողնե-
րը պիտի գործեն այն գործերը զորոնք Դուն
գործեցիր եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի
գործեն: Միթէ դուն յարութիւն չառի՞ր, եւ քա-
նի որ խաւարի մէջ ենք՝ միթէ մեր հաւատքը
պարա՛պ է:

Բայց Տէրը ինծի ըսաւ, «մի լար, եկուր
ցուցնեմ քեզի Գառնուկին հարսը, դուն պիտի
տեսնես յաղթողները, Աստուծոյ ճշմարիտ զա-
ւակները»:

Եւ տեսայ Արեւները Ենովքները, Յակոբները,
Յովսէփները, Աբրահամները, Եղիանները, Եսա-
յիները, Երեմիանները, Դանիէլները: Տեսայ սուրբ
Առաքեալները եւ Նահապետները: Իմ սիրտս
կշառցաւ զիտելով բոլոր այս սուրբերը, բոլոր
անոնք որոնք իրենց մարմինը խաչը հանեցին
բնական կիրքերով ու ցանկութիւններով մէկ-
տեղ ու Հոգիին համեմատ քալեցին (Գաղ. Ե. 24,
25), բոլոր անոնք որոնք իրենց կեանքերը չսի-

րեցին մինչեւ ի մահ, բոլոր Տարսնացի Սողո-
մները որոնք սուրբ Պողոսներ եղան իրենց անձե-
րը սիրոյ պատարագ ընելով: Այս նոր տեսիլքին
առջեւ ես գոչեցի. — «Ո՛հ, երանելի եւ սուրբ է
այս թագաւորական ցեղը որուն բնորոշիչ նշա-
նը սէրն է. քանզի իրաւ այս աշխարհի վրայ
սէրէն աւելի մեծ բան չկայ:

Ամէն ինչ կ'անցնի, միայն սէրը յաւիտենա-
կան է:

Հաւատքը մեծ բան մըն է. մեծ է նաեւ յոյ-
սը, բայց ասոնց մեծագոյնը սէրն է: Երանի՛ ա-
նոնց որոնց սրտերուն մէջ Աստուծոյ սէրը տա-
րածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռքով (Հռով. Ե. 5):
Երանի՛ անոնց որոնք զիրենք «այնպէս սիրող»
(Յովհ. Գ. 16) Աստուծոյ կը սիրեն եւ ամէն բան
Անոր փառքին համար կ'ընեն. Երանի՛ անոնց ո-
րոնք իրենց պաշտելի Փրկիչը կը սիրեն չարչա-
րանաց (անձին աշխատութեանը Եսայ. ԾԳ. 11)
պտուղը կ'ըլլան: Երանի՛ անոնց որոնք «Աստու-
ծոյ ընտանիքը» (Եփես. Բ. 19) կը սիրեն եւ անոր
միաբանութեան համար ամէն բան կը զոհեն սի-
րոյ մէջ, ուրիշները իրենց անձերէն լաւ սեպե-
լով: Երանի՛ անոնց որ իրենց կեանքերը իրենց
բարեկամներուն համար կը զոհեն: Երանի՛ անոնց
որ իրենց թշնամիները կը սիրեն, որ զիրենք ա-
նիծողները կ'օրհնեն, որ աղօթք կ'ընեն զիրենք
չարչրկողներուն ու հալածողներուն համար:
(Մատթ. Ե. 44):

Անոնց սիրտերը այլեւս բոլոր պիղծ ոգիներու
արգելանոց, եւ բոլոր պիղծ ու տառալի թռչուննե-
րու վանդակ (Յայտ. ԺԸ. 2) չեն, հապա սիրոյ
մթերանոց մը:

Անոնց ծառայութիւնը սիրոյ ծառայութիւն
մըն է:

Անոնց ողջակէզը սիրոյ ողջակէզ մըն է:

Անոնց նուիրումը սիրոյ նուիրում մըն է:

Ես տեսայ Աստուծոյ այս որդիները, անոնց
աչքերը սիրոյ կրակով մը կը բոցավառէին եւ ա-
նոնց ժպիտը սիրոյ ժպիտներ էին: Անոնց բոլոր
էութեան արտացոլումը սիրոյ արտացոլում մըն
էր: Իրենց ստացած բոլոր հարուածներուն, ի-
րենց ստացած ամենէն սոսկալի վէրքերուն փո-
խարէն՝ անոնցմէ միայն մէկ «նօթ» կ'արձագան-
գէր, — «Սէր, սէր, կատարեալ սէր: Ի՛նչ համբե-
րութիւն եւ ի՛նչ տոկոսութիւն իրենց վրայ յար-
ձակած զանազան փորձութեանց հանդէպ:

Ի՛նչ քաղցրութիւն իրենց լեզուին վրայ. սի-
րոյ քաղցրութիւնը:

Անոնք չէին գոռոզանար, բարկութեան չէին
զրգոտներ, չէին հպարտանար, չէին նախանձեր,

անվայել վարմունք չէին ունենար, չէին դառնանար, իրենցը չէին փնտռեր, չարութիւն չէին խորհէր, ամէն բան կը ներէին, ամէն բանի կը հաւատային, ամէն բանի կը յուսային, ամէն բանի կը համբերէին:

Եւ Տէրը ինծի ըսաւ. —

«Միայն Աստուծոյ այս որդիները յաղթելու կանչուած են, քանզի միայն անոնք թող տուին որ նախ Գառնուկը իրենց մէջ իր կատարեալ յաղթութիւնը տանի: Միայն Աստուծոյ այս որդիները կանչուած են թագաւորելու, վասնզի սիրոյ թագաւորութիւնը յաղթանակը պիտի շահի: Միայն Աստուծոյ այս գաւազները կանչուած են փառքի ու անմահութեան, վասնզի միայն սէրն է որ երբեք չի յնար:

Եւ ես հասկցայ թէ սէրը աւելի մեծ արժէք ունի քան մարդոց ու հրեշտակներուն բոլոր լեզուները. թէ սէրը աւելի թանկագին է քան աշխարհի բոլոր գանձերը միացած. թէ սէրը աւելի մեծ է քան ամէն խորհուրդներու պիտութիւնը: Ես հասկցայ որ եթէ իմ մարմինս այրուելու տամ, եւ իմ բոլոր ստացածքս աղքատներուն կերցնեմ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պղծինքնի պէս եղայ կամ հնչեցող ծնողաներու պէս: Ես հասկցայ թէ այս սէրը լեռները տեղափոխող հաւատքէն զերազանց է, եւ թէ երբ հոգեւոր մանկութեան բաները կ'անցնին՝ սէրը կատարեալ եղող եւ ամէն բարի գործերու պատրաստուած Աստուծոյ մարդուն ճառագայթումն է: Ես հասկցայ թէ սէրը Հոգիին պտուղներէն ամենէն վերջինը, ամենաբնորոքը, ամենէն անարատը եւ ամենէն Աստուծայինն է որուն մարդու հոգին կրնայ տիրանալ. թէ սէրը Աստուծոյ ծրագրին կատարումն է. — յայտնել աշխարհի Աստուծոյ այս որդիները, սիրոյ որդիները որոնց յայտնութեան կ'սպասեն ստեղծութեանը հառաչելով:

Գերազանցօրէն վեհ ճամբայ, արքայական ճամբայ. երանի՜ անոնց որ այս ճամբան կ'ընտրեն: Անոնց սիրելու արախութիւնը կը գերազանցէ իրենց կրկնիչ չարչարանքները, քանզի այս սէրը մահուան պէս զօրաւոր է եւ շատ Զուրկը չեն կրնար գայն մարել (Երգ. Բ. 6, 7): Ինչպիսիք վրայ ունեցած իրենց այս սէրէն է որ կը փանչցուին ցիտուս Գրիւտոսի ֆլամբիտ աշաւ կերանները, եւ ան որ աշուպէս ու այս առաքման չափերը՝ զԱստուծոյ չճանչնար, վասնզի Աստուծոյ սէր է:

Եւ հիմա սիրելի բնութեցող, բո՛ւն գտաւոր եւս գուն: Ատելութեան ի՞նչ սիրոյ գտաւոր եւ:

Մարդասպան Կայէ՞նի թէ նահատակ Արեւի սերունդն եւ: Մարմինով թէ Հոգիով կ'առաջնորդուի: Քու շուրջդ ձգած ազդեցութիւնդ կեանքի՞ թէ մահուան ազդեցութիւնն է: Քու խօսքերդ վերաւորով թէ բժշկող խօսքեր են: Մէկ խօսքով սկիզբէն ի վեր մարդասպան եղող Սատանայի՞ թէ սիրոյ եւ ուրեմն Աստուծոյ գաւազն եւ: Հեզ եւ սրտով խոնարհ ցիտուսի փրկեալն եւ: Կ'արժէ որ այս հարցումը ընես ինքզինքիդ: Քանզի ամէն ստեղծութեանը մինչեւ հիմա մէկտեղ կը հառաչեն ու ծնանելու ցաւ կը քաշեն, սպասելով եռանդուն ակնկալութեամբ Աստուծոյ օրովինքնուն յայտնութեան:

Վեր. ՓՕԼ ԹԻՍՕ

ՀՈԳԵԿԱՆ ԱԽՏԵՐ

Գ. ԱԳԱՀՈՒԹԻՒՆ. — Հոգեկան հիւանդութիւններու մէջ ամենափնտրուածներէն է ազահութիւնը եւ նաեւ ամէն չարեաց արմատը Կող. Գ. 5, Ա. Տիմ. 2, 10: Անբուժելի ըլլալու առաջին դժուարագութիւնն է, քանի որ ազահը իր դոնները կը գոցէ Քրիստոսի առջեւ եւ Ս. Հոգւոյն լոյսը հոն չկրնար թափանցել Եզեկ. ԼԳ. 34:

Ուրիշ ցաւալի պարագայ մը, ազահը իր ախտին անգիտակ կը գովէ իր ընթացքը Սաղ. Ժ. 3:

Ազահը իր անձին կը փնտէ, սատոիկ ցաւերու ենթարկելով գայն, իր ընտանիքը կը զրկէ Առակ. ԺԵ. 27: Աստուծոյ թագաւորութեան եւ գործին ի փնտս կը դիգէ եւ վերջապէս ամէն վայելքէ զուրկ ցաւալի վախճանով մը կ'երթայ:

Այս ախտին ուրիշ փնտաւար մէկ հետեանքը այն է որ սերունդը կը վատասերի, ազահութենէ շռայլութիւն կը ծնի. ազահին հաւաքածը եւ ընթացքը իրմէ վերջը եկողին հոգւոյն որդայթ ըլլալով գայն շռայլութեան կը տանի եւ ինչ որ ինք հաւաքած է շռայլը գայն կը փճացնէ մեղքի եւ անօրէնութեան մէջ: Եսայ. Ե. 8, 9:

Ազահը խեղճ բեռնակիր մըն է հոգերով եւ ցանկութիւններով ծանրաբեռնուած, որոնց տաժանքին տակ կը կքի մինչեւ դեբեզման եւ յաւիտեանականութեան կ'անցնի խեղճ ու թշուառ Ղուկ. ԺԲ. 15:

Ներկայիս խիստ տարածուած հիւանդութիւն մըն է եւ լուսաւոր հրեշտակի կերպարանքով եկեղեցիին մէջ ալ կը մտնէ: «Ապագան խորհիլ մարդու կարգ անցնիլ» եւ այլն ձեւերով իր մանրէները կը տարածէ շատ մը սրտերու մէջ. ա-

դժբեհք որպէսզի Տէրը մեզ պահէ անոր աւերիչ ազգեցութենէն. Սաղ. ՃԺԹ. 36:

Հիւանդութեան անբուժելի ըլլալու աստիճան գէշ ըլլալը նկատուելով, կանխարգելիչ միջոցներով վարակուելէ զգուշանալու է:

1. Վիճակէդ գոհ եղիր, Փիլ. Դ. 44:

2. Առատաձեռն եղիր. Սաղ. ՃԺԲ. 9, Ա. Տիմ. 2. 18, 19:

3. Երբ ազահուժեան զգացումը կ'արթնայ մէջդ, հետեւեալ համարներուն վրայ խորհէ. Ա. Յովհ. Բ. 15-17, Ղուկ. ԺԲ. 15-21:

Դ. ԲԱՄԲԱՍԱՆՔ և ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Ներկայիս ամենէն շատ տարածուած հոգեկան ախտ մըն է, խիստ վարակիչ. թէեւ հիւանդութիւնը ներքին է, սակայն իր մանրէները կը գտնուին մարդուն լեզուին եւ շրթունքին վրայ: Վարակուողը իր ականջէն կը վարակուի, ուրկէ վարակող մանրէները սրտին իջնելով կ'աճին և կրկին նոյն կերպով ուրիշները կը վարակեն: Տուներ քանդող եւ Աստուծոյ եկեղեցին ցաւերով լեցունող հիւանդութիւն մը ըլլալուն աւելի զգուշութիւն կը պահանջէ. Ղեւտ. ԺԹ. 16:

Երբեմն բարի նպատակաւ եւ ուղիղ դատողութեամբ ուրիշներու յանցանքը պատմելն իսկ կը յայտնէ թէ հիւանդութեան մանրէն սկսած է մեր մէջ գործել:

Կանխարգելիչ միջոցն է, տեսնուած սխալը կամ յանցանքը մեղանշող անձին ըսել առանց ուրիշի պատմելու, եւ այն ալ մեր Տէրոջ ցոյց տուած կերպով միայն: Մատթ. ԺԲ, 3-17:

Հիւանդութիւնը մասնաւորապէս կ'աճի ծոյլերուն քով. Առակ. ԺԲ. 18, Ա. Տիմ. Ե. 13:

Իր որոշ աւերներն են բարեկամները իրարմէ զատել Առակ. ԺԷ. 9, ԺԶ. 28, Հոգեւոյն Սրբոյ միաբանութիւնը խանգարել. Առակ. 2. 18, 19, եւ սէրը պակսեցնելով տաղութիւն սերմանել, որ է եղբայրասպանութիւն. Եզեկ. ԻԲ. 9, Սաղմ. ԼԱ. 13:

Բանը տարածող չարախօսական գիրքեր եւ գրքոյկներ ալ շատցած են այս օրերս, ուստի աչքերն ալ պաշտպանուելու են:

Ազատուելու միջոցն է չարախօսէն հեռանալ եւ զայն լռեցնել Առակ. ԻԵ. 23: Եթէ մտիկ ընող չըլլար՝ բանքասուղ եւ չարախօսուղ ալ պիտի չըլլար, ուստի խօսողին չափ եւ թերեւս աւելի յանցաւոր է զայն մտիկ ընելով քաջաշիրտը:

Գիտնալ թէ Աստուած մեզ կը լսէ եւ մեր ըրած այս շար գործին համար հաշիւ պիտի տանք Մատթ. ԺԲ. 36:

Ամենապատուական դեղը չարախօսութիւնը խոստովանութեամբ խաչին տանիլ եւ մէկդի ձգելէ վերջ անխարդախ կաթին փափաքովը լեցուել է. Ա. Պետ. Բ. 1, 2: Երբ մեր աչքերը Աստուծոյ պատգամին կը նային, մեր ականջները Անոր ճշմարտութեան բացուած են եւ մեր շրթունքները Անոր փառքը կը պատմեն, չարախօսութեան եւ բանքասանքի մանրէները մեզի պիտի չմօտենան եւ մեր միջոցովը տնոնցմէ մաքուր պիտի մնայ Սաղ. ՃԾ. 6:

Փօս տ'Օպէնաս

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Շար.)

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

11 ՄԵՐ ԸՆԹԱՑՔԸ

«Հապա թէ որ լոյսի մէջ քալենք, ինչպէս անիկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք, ու Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ»: Հաղորդակցութիւնը անոր մէջ չկայանար որ քանի մը մարդիկ մասնաւոր տեղ մը նստին ու Աստուծոյ խօսքին վրայ խօսին. հաղորդակցութիւնը այն ատեն անկեղծ ու իրական բան մը կ'ըլլայ որ Հոգիին միջոցաւ կ'ապրին ու Հոգիով կը քալեն. Ատոր համար շատ կարեւոր է որ մեր կեանքը վկայէ թէ մենք քրիստոնեաներ ենք, ինչպէս ըլլալու է մեր ընթացքը որ թէ Աստուծոյ պատիւ բերէ եւ թէ մեր ընկերներուն ուրախութիւն պատճառէ:

1. Հաւատքով ընծացք մը Աստուծոյ հանդէպ: Քրիստոսեայ ըլլալ կը նշանակէ Աստուծոյ գալ. ով որ Քրիստոսի հետ հաղորդակցութեան եկած է, զԱյն իբր ճամբայք ճշմարտութիւն եւ կեանք կը ճանչնայ. ան Աստուծոյ մէջ եւ Աստուծոյ ալ իր մէջ. որով կրնայ հաւատքի հոգիով ըսել «Արքա Հայր», ան կը պարծենայ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Աստուծոյ փառաց յուսով կը պարծինք»: Երբոր մարդ մը քրիստոնեայ ըլլալէ առաջ զԱստուած մերժէ, իր սրտին մէջ այն զգացումը կ'ունենայ թէ անիկա խիստ մէկ մըն է, իսկ երբ կենդանի քրիստոնեայ մը եղած է անոր աւելի մօտ կուգայ ու այլեւս իր շրջապատին հետ յարաբերութիւն չունի եւ այն ըզգացումը չունենար թէ անիկա խիստ մէկ մըն է, հապա իր ներքը ուրախութեամբ լեցուն հոգիէն շարժեալ զայն կը գովէ ըսելով, «Երբեք մեծ է Ամենակարողին շնորհքը», Աստուծոյ վրա-

տահելի կեանք մը ապրիլ նման Յիսուսի որ Իր թշնամիներն Իրեն համար վկայեցին թէ «Աստուծոյ կը վստահի»:

2. Սիրոյ ընծացք մը մեր ընկերներուն հանդէպ: Մեր ընթացքը սիրոյ ընթացք մը թող ըլլայ: Բրիստոնէին հաւատքը միշտ գործի վրայ է, այնպէս ըլլալու է մեր վարքն ու բարքը որ զմեզ մեր ընկեր արարածներուն հետ սիրալիբ յարաբերութեան մէջ դնէ. քրիստոնեայ մը պէտք է որ տարբեր ըլլայ ուրիշներէն, եթէ ոչ բնաւ ազդեցութիւն մը պիտի չունենայ մարդոց վրայ:

3. Մեղքին հանդէպ լուսոյ ընծացք մը: Մեր ընթացքը մեղքին հակառակ եւ լուսոյ մէջ ըլլալու է: Մարդ մը բնած է «Երբոր դարձի եկայ մեծ ատելութիւն մը ունեցայ մեղքին հանդէպ»: Սուրբ Գրքը կ'ըսէ, «Լուսոյ որդիներու պէս քալեցէք»: Մեծն Աղէքսանդր իր խումբին մէջ նորն անունով մարդ մը ունէր որ բաց բերան էր, շատ մը բաներ կրնար դուրս տալ: Օր մը կ'ըսէ այդ մարդուն, «Կամ անունդ կամ կեանքդ փոխէ»: Նոյնը կրնայ ըստիլ այսօր շատ մը քրիստոնեաներու:

4. Մարմնոյ հանդէպ հոգեւոր ընծացք մը: Մեր ընթացքը մարմնոյ հանդէպ պէտք է որ հոգիով ըլլայ: Մարմին կ'անուանէ Սուրբ Գրքը մեղսալից ու Աստուծոյ հակառակ այն վիճակը որ մեր մէջ ունինք եւ մեր անգամներուն մէջ կ'զգանք: Աստուած կը թողու որ Իր Հոգին մեր մէջ բնակութիւն հաստատէ: «Ձե՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին»: Եթէ քրիստոնեայ մըն ես, նայէ թէ ինչպէս կը քալեա: Առաքեալը կ'ըսէ, «Ձեզի ինչպիսի մարդիկ ըլլալ կը վայելէ, սուրբ վարմունքով եւ բարեպաշտութեամբ»:

Թարգ. (Վեր.) ՅԱՅՈՒԲ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
Գալալա

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԶԱՐԾԱՆԱԼԻ ՈՃՐԱԳՈՐԾ ՄԸ

Միզէլ Վալէսքի, սպանիացի բանուոր մը՝ ամբաստանուած չորս մահափորձերով եւ մէկ մարդասպանութեամբ, 1907ին «Օտ»ի (Aude) ոճրագատ ատեանին կողմէ ի բացակայութեան մահուան դատապարտուած էր: Շատ մը տարիներ հարաւային Ֆրանսայի կողմերը փախտական պատելէ յետոյ հար. Ամերիկա Արժէնթին փախաւ:

Բողաբոյի մէջ՝ ուր նա Աւետարանական պաշտամունքներու կը յաճախէր, Վալէսքի ապաշխարեց: Բրիստոնի արեան իր մեղքերուն համար թափուած ըլլալը հասկնալէ եւ ընդունելէ յետոյ, որոշեց Ֆրանսա վերադառնալ եւ դատուիլ իր անցեալի ոճրագործութեան համար: Իր բարեկամներուն բոլոր խրատները չկրցան զայն ետ կեցնել իր որոշումէն: «Գիտեմ թէ, կ'ըսէր, կրնամ դատապարտուիլ կամ մահուան եւ կամ զոնէ տաժանակիր աշխատութեան, եւ իմ փրկութիւնս միայն իմ Փրկչէս կ'սպասեմ, սակայն իմ մեղքս նաեւ մարդկութեան դէմ եղած է, եւ կ'ուզեմ հոն ալ իմ յանցանքներս խոստովանիլ եւ ընդունիլ ինչ պատիժ որ անոնք յարմար կը սեպեն տալ ինձ:

Վալէսքի իր ճամբորդութեան, բանտի, եւ ի հարկին Ամերիկա վերադարձի համար հարկ եղած գրամը խնայողութեամբ աւելցնելէ յետոյ՝ 1913ին Ֆրանսա եկաւ եւ ինքզինքը ոստիկանութեան յանձնեց: Մերժեց պաշտպան փաստաբան մը ընտրել եւ ըստ օրինաց իրեն պաշտպան նշանակուած փաստաբանէն խնդրեց որ ճամբորդութեան հակառակ ոչինչ չըսէ:

Պատուելի մը զայն այցելեց բանտին մէջ:

—Ուրեմն չե՞ս զղջար կամաւ բանտարկուելուդ համար:

—Ո՛չ, կը զղջամ մարդ սպաննած ըլլալուն եւ Աւետարանը աւելի կանուխ ճանչցած չըլլալուն համար:

—Գիտե՞ս թէ քու սպաննած մարդուդ տղան դատարան պիտի գայ քեզի դէմ դատ վարելու:

«Աւելի լաւ, ինձ համար խղճի թեթեւացում մը պիտի ըլլայ հրապարակաւ անկէ ներողութիւն խնդրել»:

—Բայց ասոր հետեւանքը քեզի համար կրնայ ըլլալ դատապարտութիւն, աքսոր ու չարչարանք:

«Ի՞նչ փոյթ, մեր Տէրը Գողգոթան ի վեր բարձրացաւ եւ նա ինձ նման մարդասպան մը չէր»:

—Կը յուսանք թէ դատաւորները քու զղջումդ նկատի կ'առնեն:

«Ատիկա իրենց գիտնալիք բանն է: Ինչ որ կը վերաբերի ինձի, ես պատրաստ եմ Աստուծոյ կամքին առջեւ համակերպիլ եւ հնազանդիլ:

—Ձեզի համար բան մը կրնա՞մ ընել:

«Կրնաք աղօթել, ինձ համար կ'աղօթեն Բողաբոյի մէջ, Պուէնոս Այրէսի մէջ, եւ բանտիս մէջ կ'աղօթեմ, եւ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:

Վալէսքիի անկեղծ ընթացքը այնքան յուզիչ

ու սրտաշարժ էր որ դատաւորէն սկսեալ ամէն մարդ անկէ ազդուեցաւ ու զգածուեցաւ: Դատաւորները զայն անպարտ արձակեցին՝ եւ բազմութիւնը միասին ծափահարութիւններով ուրախացաւ:

Սիրելի ընթերցող, թերեւս դուն ալ ներում խնդրելու բան մը ունիս եւ այդ բանը զքեզ երկար ժամանակէ ի վեր անհանգիստ կ'ընէ: Արդ ժամանակն է որ դուն եւս մաքուր հաշիւ մը ընես Տէրովը եւ մարդոց առջև: «Քու ոսոխիդ հետ հաշտուէ»:

ԱԽԱՉԱԿԱՊԵՏԻ ՄԸ ԴԱՐՁԸ

Քաղաքնաք Կրօնականությանի (հիւս. բեւեռ) լեռներուն մէջ թափառող աւազակապետ մըն էր: Օր մը հիւզակ մը մտաւ ուր միսիոնար մը Յովհաննու Աւետարանը թարգմանելու վրայ էր: Քաղաքնաք միսիոնարին հարցուց թէ ի՞նչ կ'ընէր: Միսիոնարը բացատրեց թէ թուղթին վերայ գծած նշանները գիրեր էին եւ թէ այս գիրքը կրնար խօսիլ: Աւազակապետը փափաքեցաւ գիտնալ թէ թուղթը ի՞նչ կ'ըսէր:

Այն ատեն Աստուծոյ ծառան անոր կարգաց Յիսուս Քրիստոսի չարչարանաց պատմութիւնը:

«Բայց ի՞նչ ըրած էր այդ մարդը», հարցուց անմիջապէս աւազակապետը. «այդ Յիսուսը գողութիւն ըրած էր, մէ՞կը սպաննած էր»:

«Ո՛չ», պատասխանեց միսիոնարը, «Անիկա չար բան մը չըրաւ»:

«Ուրեմն ինչո՞ւ չարչարեցին եւ մեղցուցին զԱյն»:

«Մտիկ ըրէ», ըսաւ միսիոնարը, «այս մարդը չար բան մը ըրած չէ, բայց Քաղաքնաք չարութիւն ըրած է: Այս մարդը մէկէն բան մը չէ գողցած, բայց Քաղաքնաք շատ մը մարդիկ կողոպտած է: Այս մարդը մէ՞կը չէ սպաննած, բայց Քաղաքնաք սպաննած է նոյնիսկ իր հարազատ եղբայրը: Այս մարդը չարչարուած է, որպէսզի Քաղաքնաք չի չարչարուի: Այս մարդը մեռած է որպէսզի Քաղաքնաք չմեռնի»:

Չարմանքի եւ յուզումի գերագոյն աստիճանին հասած՝ աւազակը խնդրեց, «անգամ մըն ալ կրկնէ այդ ըսածներդ»:

Եւ միսիոնարը կրկնեց. ու Աստուծոյ Հոգւոյն ներշնչմամբ պատմեց խաչին հին պատմութիւնը որ միշտ նոր է եւ Աստուծոյ ղորութիւնն է մեղաւորները փրկելու համար: Քարասիրտ աւազակապետին սիրտը կակուղցաւ եւ խաչեալ Քրիստոսի առջև խոնարհելով փրկութիւն գտաւ:

«Անիկա մեր մեղքերուն համար վերաւորուեցաւ, եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը Անոր վերայ եղաւ, եւ Անոր վերքերովը մենք բժշկուեցանք» (Եսայ. ԾԳ. 5):

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԻՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄ

1916ին երիտասարդ մը ներկայացաւ միսիոնարական ընկերութեան մը եւ խնդրեց որ զինք կռապաշտներուն մօտ իբր միսիոնար զրկեն: Չայն բժշկական քննութենէ անցուցին եւ ստիպուեցան մերժել՝ հարկ եղած առողջութիւնը չունենալուն պատճառաւ:

Այս մերժումը զայն Հյուսահատեցուց: Տեսնելով թէ չէր կրնար կռապաշտ երկիր երթալ՝ որոշեց դրամով օգնել: Վասնաւականութեան ըսկըսաւ որպէսզի Աստուծոյ գործին համար դրամ շահի:

1917 ին 75 անգլ. ոսկի զրկեց միսիոնարութեան:

1918 ին	480	»	»
1919 ին	1900	»	»
1920 ին	1024	»	»
1921 ին	2500	»	»
1922 ին	3000	»	»
1923 ին	3500	»	»
1924 ին	4425	»	»
1925 ին	4908	»	»
1926 ին	7403	»	»

Ընդամենը 29 215 անգլ. ոսկի տասը տարուան մէջ, որ կ'ընէ 3 ու կէս միլիոնէ աւելի ֆրանք:

Այս հաւատացեալը տակաւին կը շարունակէ դրամ տալ տարուէ տարի Աստուծոյ գործին համար: Միայն երեք անձեր գիտեն անոր ով ըլլալը:

Դուն ո՞րչափ կուտաս Աստուծոյ գործին համար ով հաւատացեալ: Եթէ միայն կ'աղօթես եւ ճշմարիտ սրտով կ'աղօթես, սիրտը պիտի փղձկի եւ բանայ նաեւ քսակը Տէրովը համար. եթէ չի բանար քսակը, աղօթքիդ անկեղծութեանը վերայ կասկածէ:

Տէրովը պատիւ ըրէ քու ստացուածքէդ, եւ քու բոլոր բերքերուդ երախայրիններէն: Առաւ. Գ. 9

Ան որ շատ ժողովեց՝ չաւելցաւ, ու ան որ քիչ՝ չպակսեցաւ: Բ. Կոր. Ը. 15

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆԱՊԱՏԻ ԽՈՐԱՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿ

Անոնց որ Աստուածաշունչի «օրինակ»աւոր ուսմունք սերտել կը փափաքին, կը թելադրենք որ զգուշաւոր եւ ազօթքով սերտեն Երրայեցւոց թուղթը: Մենք «օրինակ»աւոր ճշմարտութիւնները վարդապետութեանց կարգը չենք գնել, ոչ ալ կ'ուզենք Սուրբ Գիրքը «ծուռ կողմը դարձնել... մեր անձին կորուստին համար», եւ կամ զանոնք անպատճառ յարմարցնել մեր խելքին փչած զաղափարներու կամ մեկնութեանց: Հին Կտակարանէն ոչ մէկ բան անպատճառ իբր օրինակ հաստատուելու չէ, առանց Նոր Կտակարանին մէջ զայն իբր այդ վաւերացնող հատուածի մը գոյութեան: Այս կանոնը ի միտ ունենալով կը խորհինք թէ Անապատի խորանին «օրինակ»աւոր բաները հետեւեալները կը ներկայացնեն.

Ճերմակ քթան — արդարութիւն

Կապոյտ — երկնային

Ծիրանեզոյն — արքայական

Կրկնակի կարմիր — ողջակիզում

Ոսկի — Աստուածութիւն

Փայտ — մարդեղութիւն (մարդկութիւն)

Արծաթ — փրկութիւն

Պղինձ — դատաստան

Դուռը — Քրիստոս միակ ճամբան

Պղնձէ սեղանը — Քրիստոս մեր ողջակէզը

» աւազանը — » խօսքը (Բան)

Առաջաւորութեան հացը — Քրս. մեր կեանքը

Աշտանակը — Քրիստոս մեր լոյսը

Խոնկի սեղանը — » մեր Բարեխօսը

Երկրորդ վարպոյրը — Քրիստոսի մարմինը

Քաւութեան տապանակը՝ Քրս. մեր քաւութիւն

Սրբութիւն Սրբութեանցը — երկինք

Տապանակին մէջ մանանան — Քրիստոս

Աստուծոյ ժողովուրդին կերակուրը

Տապանակին մէջ ուխտին տախտակները —

Քրիստոսի Աստուծոյ օրէնքը պահելը

» մէջ Ահարոնի ծաղկեալ զաւազանը —

Քրիստոս յարութիւն եւ կեանք

Տախտակները եւ նիզերը — Աստուծոյ ժո-

ղովուրդը իրարու միացած հոգիով

Աստուծոյ բնակարան ըլլալու

Քէրովբէները — Աստուծոյ գործակատարները

Ամպը — Աստուծոյ պաշտպանութիւնը

Տէրոջը փառքը — Աստուծոյ ներկայութիւնը

Վրանը ինքնին — Քրիստոսի մեր մէջ բնակիլը

Վրանին չորս ծածկոցները — Քրիստոս իր

չորս յայտնութեանց մէջ նկարագրուած՝

Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ

Յովհաննու Աւետարաններուն մէջ:

Խորանին մէջ ամէն մէկ բան Քրիստոսի մասին կը խօսի, անոր ամէն մէկ մասը Քրիստոսի փառքը կը պատմէ:

Աստուած Իսրայէլի որդիները կանչեց ու զատեց իրեն սեփական ժողովուրդ ընելու — Քահանաներու թապաւորութիւն մը: Անոնք վկաներ պիտի ըլլային. —

Ենովայի միակ ճշմարիտ Աստուած ըլլալուն:

Անոնք լոյս պիտի ըլլային հեթանոսաց:

Աստուծոյ սուրբ պատգամները պիտի ստանային ու փոխանցէին:

Մարմնի կողմանէ Մեհիան պիտի ծնանէին:

Անոնց պատմութիւնը լեցուն է գրեթէ միշտ օրէնքին, կանոններուն, տօներուն, զոհերուն եւ հրամաններուն զանցառութեամբը ու պղծելովը: Ժամանակի ընթացքին խորանը տաճարով փոխանակուեցաւ եւ ի վերջոյ տաճարն ալ քանդուեցաւ: Հաւատարացութիւն, ուխտագանցութիւն, գերութիւններ, արթնութիւններ եւ վերազարձներ կը յատկանշեն ընտրեալ ժողովուրդին պատմութիւնը: Իսկ այսօր, իրենց Մեհիան մերժելէն գրեթէ երկու հազար տարիներ յետոյ անոնք աշխարհի ամէն կողմը ցրուած են:

1. Պղնձէ սեղանը — Քրիստոս մեր ողջակէզը (Ղեւտ. Ա. 1-17 — Եբր. ԺԳ. 10-14), ողջակէզի համար հինգ կենդանիներ ընդունելի էին Աստուծոյ,

(1) Զուարակ — Քրիստոս մինչեւ մահուան հրնազանդ (Փիլ. Բ. 5-8, Եբր. ԺԲ. 2): (2) Ոչխար — Քրիստոս առանց զիմաղքելու մինչեւ մահուան յօժարած (Եսայ. ԾԳ. 6, 7, Եբր. ԺԳ. 20): (3) Այծ — Քրիստոս յանցաւորներուն հետ սեպուած (Ես. ԾԳ. 12, Ղուկ. ԻԴ. 33): (4 եւ 5) Տաւրակ կամ աղանի — Քրիստոս իր աղքատութեան եւ անմեղութեան մէջ (Բ. Կոր. Ը. 9, Յովհ. ԺԴ. 30):

Քրիստոս իր անձը մէկ անգամ Աստուծոյ անարատ պատարագ մատուցանելը մեզ յաւիտեան «կատարեց» (կատարելութեան հասցուց) (Եբր. Թ. 14-15, Ժ. 1-14): Իբր մեղքի պատարագ Քրիստոս մեր մեղքերը իր վրան առաւ (քեռնաւորուեցաւ) եւ մեր պատիժը կրեց (Եսայ. ԾԳ. Սաղ. ԻԲ. Ղուկ. ԻԳ. 27-49, Ա. Պետ. Բ. 24, Գ. 18, Յովհ. ԺԹ. 16-37, Մատթ. ԻԲ. 33-50): Անիկա Աստուծոյ բարկութեան կրակովը այրուեցաւ (Սաղ. ԺԲ. 3), Աստուծոյ ամէն կոհակները ու ալիքները Անոր վրայէն անցան (Սաղ. ԽԲ. 7, Կթ. 1, 2, 15), իր մահուամբ մենք կեանք ունինք

(Յովհ. Գ. 14-21) եւ բնաւ դատապարտութեան տակ պիտի չիյնանք (Յովհ. 5. 24-29):

(2) Պղնձէ աւազանը — Քրիստոս մեր Բանը (Եւրեյ. Լ. 17-21 — Յովհ. Ա. 14) Աւազանը Իսրայելացի կիներուն տուած հայելիներէն շինուած էր: Հոս ի յայտ կուգայ ժողովուրդին յօժարակամութիւնը՝ իրենց ունայնութիւնները զոհելու անձնուիրման համար: Աւազանը մաքրուելու պատգամը կը բերէ, անոր մէջ քահանաները կը լուացուէին սրբաբանին մէջ պաշտօնի մտնելէ առաջ: Ահարոնի կարգին մէջ այս լուացումը մերժող քահանան իր վրայ մահուան վճիռը կը բերէր (Եւրեյ. Լ. 17-21, ԼԸ. 8): Քրիստոնէական քահանայութեան մէջ ամենօրեայ լուացումի համար նախատեսութիւն եղած է. մենք չօրը աջ կողմը բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս Արդարը (Ա. Յով. Ա. 8-10, Բ. 1, 2): Մենք կը մաքրուինք Աստուծոյ Խօսքովը (Սաղ. ԾԺԹ. 9-16): Քրիստոս Իր եկեղեցին խօսքին ջրովը կը լուայ (Եփս. Ե. 23-27, Տիմ. Գ. 5, Եբր. Դ. 12. Բ. Տիմ. Գ. 16, Յովհ. Ժե. 3, Ժէ. 17-19):

3. Աշտանակը — Քրիստոս մեր լոյսը (Եւրեյ. Լ. 17-24 — Յովհ. Ը. 12, Ա. Յովհ. Ա. 7): Աշտանակը կը խօսի Քրիստոսի վրայով իբր կենաց լոյսը եւ աշխարհի լոյսը: Իւրը Սուրբ Հոգիին խորհրդանշանն է (Մատթ. ԻԵ. 1-13): Մեր Տէրը Ս. Հոգին առանց չափի ունէր (Եսայ. ԺԱ. 2, Յովհ. Գ. 34): Քրիստոս ճշմարիտ լոյսն է որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ (Յովհ. Ա. 3-9): Անոնք որ Իր ետեւէն կ'երթան խառնարի մէջ չեն քալեր, հապա կենաց լոյսը ունին (Յովհ. Ը. 12, ԺԲ. 35, 36, 46): Նոր Կտակարանի հաւատացեալներ լուսոյ մէջ կը քալեն ինչպէս Ան լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենան, ու Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ առնէ մեղքէ կը սրբէ (Ա. Յովհ. Ա. 5-7): Երբ երկինք երթանք, Գառնուկը Ինքը երկինքի լոյսը պիտի ըլլայ (Յայտ. ԻԱ. 22-27). հոն գիշեր պիտի չըլլայ, քանզի մեր Տէրը հոն լոյս պիտի ըլլայ (Յայտ. ԻԲ. 5, 6):

(Մնացեալը յաջորդիւ)

Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունենալով սուրբ տեղը մտնելու Յիսուսի արիւնովը, այն նոր ու կենդանի ճամբովը՝ զոր բացաւ մեզի վարազուրի մէջէն, որ է Իր մարմինը եւ Մեծ Քահանայապետ մը ունենալով... մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն հաւատքով սիրտերնիւ չար խիղճէն մաքրուած... Եբր. Ժ. 19-22:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Պետրոսի մասին գրած ատեն շանացինք ցուցնել թէ Սուրբ Հոգին զայն քաջ, իմաստուն, անձնուէր եւ զօրաւոր վկայ մը ըրաւ Յիսուսի համար: Հոգին նոյն ազդեցութիւնը գործեց նաեւ Յովհաննէսի վրայ: Պէտէկոտեէն յետոյ զայն կը զաննէք վկաներու առաջին շարքին մէջ, յաճախ Պետրոսի կողքին:

Անոր հետ միասին էր, երբ նա բժշկեց «իր մօրը որովայնէն կաղ ծնած մարդը», եւ այդ առթիւ քողագերծեց Իսրայէլի մեղքը — «Սուրբը եւ Արդարը ուրանալը եւ կենաց Առաջնորդը սպաննելը» — եւ խրախուսիչ խօսքերով երկու հազար անձեր ապաշխարութեան ու հաւատքի առաջնորդեց: Երկուքը միասին բանտարկուեցան եւ ապա դատուեցան սանատրիոնի առջեւ, ուր անոնք համարձակութեամբ վկայեցին հրեայ իշխաններուն, ծերերուն, դպիրներուն ու քահանայապետներուն — ճիշդ այն մարդոց որոնք Յիսուսը խաչած էին — թէ Անիկա, զոր իրենք մահուան դատապարտած էին, իբր անպէտ քար մը անարգած էին, անկեան զլուխ եղած է ու միմիայն Անով է փրկութիւնը (Գործ, Գ. 7):

Դարձեալ երկուքը միասին գացին Սամարիա, ուր մեծ բազմութիւն մը Փիլիպպոսի քարոզութեամբ քրիստոնէութեան դարձած էին, սակայն դեռ Սուրբ Հոգին ստացած չէին: Ուստի Պետրոս եւ Յովհաննէս ազօթեցին ու ձեռք դրին անոնց վրայ ու անոնք ալ իսկոյն ընդունեցին Սուրբ Հոգին: Այս կերպով կապ հաստատուեցաւ հրեայ ու սամարացի քրիստոնեաներու միջեւ եւ նախկին ատելութիւնն ու հակառակութիւնը վերացուեցաւ, բաժանող պատը քանդուեցաւ Գործ. Ը. 4-25:

Կարճ այնքան կարեւոր եւ ուշագրաւ էր Յովհաննէս Առաքեալի դերը որ առաքելական դարու եկեղեցին զայն կը նկատէր իր երեք սիւներէն մին Գաղ. Բ. 9:

Սակայն Յովհաննէսի քարոզչութեան ու զործունէութեան շրջանակը ընդարձակուեցաւ Պաղեստինի սահմաններէն ալ դուրս: Յիսուսի հըրամանին համաձայն՝ բոլոր առաքեալները Անոր համար վկաներ եղան նախ միայն «Երուսաղէմի մէջ եւ բոլոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ Գործ. Ա. 8: Բայց երբ այդ տեղերու մէջ Աս-

տուժոյ ընտրեալները արդէն ի մի հաւաքուած էին, մեր Տէրոջ ընտիր դեսպանները զուրա ելան իրենց հայրենիքէն եւ գացին աւետարանելու մինչեւ երկրի ծայրերը: Անոնք մեզի նման անհոգ ու թոյլ չէին, հաւատարիմ տնտեսներ էին եւ կը ջանային կենաց հացը բաժնել բոլոր սովեալներուն: Պետրոս գնաց մինչեւ Բարելոն Ա. Պետ. Ե. 13 եւ ապա Հռովմ, եւ գէթ նամակով ծառայեց նաեւ «Պոնտոսի, Դադատիայի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի» քրիստոնեաներուն Ա. Պետ. Ա. 1, 2:

Նոյնը ըրաւ նաեւ Յովհաննէս: «Աստուծոյ խօսքին ու Յիսուս Քրիստոսի վկայութեանը համար» Յայտ. Ա. 9, անիկա գտնուած է Պատմոս կղզին, հոն ընդունած է «Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը», որ այսօր մեր յոսիսն ամենէն խորունկ աղբիւրն է, մեր բոլոր նեղութեանց ու տառապանաց եւ յուսահատութեան ու յոգետեսութեան տեսն կրնանք այդ ակին մօտենալ եւ մեր պապակը յագեցնել:

Երկրորդ դարէն մեզի հասած գրեթէ բոլորովին վստահելի աւանդութիւնը մեզի կը ցուցնէ թէ Յովհաննէս գտնուած է նաեւ Եփեսոս եւ հոն ապրած է մինչեւ իր մահը, որ տեղի ունեցած է բնական պայմաններու տակ, եւ թէ իր վերջին քարոզը բաղկացած է եղեր միայն մէկ նախադասութենէ. — «Որդեակներս, մէկգմէկ սիրեցէք» զոր մօտաւորաբար հարիւր տարեկան կորաքամակ ծերունին արտասանած է՝ կոթնած իր գաւազանին: Դարձեալ նոյն աւանդութիւնը մեզի կը պատմէ թէ յուսալից երիտասարդ մը, որ իր հոգեւոր կեանքէն ինկած էր եւ աւագակապետ մը դարձած, Յովհաննէսի փնտռող ու ամէն բանի հաւատացող ու յուսացող սիրովը (Ա. Կորն. ԺԳ. 7) Քրիստոսի առաջնորդուած է:

Այսպէս՝ կը տեսնենք թէ Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբ Յովհաննէսը եղած է պտղաբեր վրկայ մը իր եւ մեր Փրկչին համար եւ մեծ բաժին ունեցած է քրիստոնէութեան տարածմանը մէջ: Սակայն յայտնի է որ իբր քարոզիչ ու կազմակերպիչ Պետրոսը կը գերազանցէ զինք. գրեթէ միշտ ան է որ գործօն դերը կը ստանանէ, կը քարոզէ մեծ բազմութիւններուն ու հազարաւորները հաւատքի կ'առաջնորդէ ու կը կազմակերպէ զանոնք իբր եկեղեցի եւ ան է որ Քրիստոսի դատը կը պաշտպանէ ատեաններու առջեւ: Ան է վէմը որու վրայ Յիսուս կը հաստատէ իր եկեղեցին: Յովհաննէս առհասարակ անոր քով կը կենայ՝ իր ներկայութիւնովն ու կարճ վկայութիւնովը հաստատելու եւ զօրացնելու ա-

նոր խօսքն ու գործը: Իր կեանքի վերջին օրերն ալ Յովհաննէսն անոր դաշտ մը չբացաւ քրիստոնէութեան համար, հապա գործեց հոն՝ ուր Պօղոս իբր իմաստուն ճարտարապետ մը՝ արդէն ընտիր հիմը դրած էր: Ուստի հոս ալ Յովհաննէս արդէն սկսուածը շարունակեց, ուրիշի մը դրած հիման վրայ շինեց, բայց ոչ թէ փայտ, խոտ ու եղէգ, հապա ոսկի արծաթ ու պատուական քարեր:

Արդէն Յովհաննէսի խառնուածքին մէջ ալ չկային նոր գործ մը սկսելու յատկանիշները: Սուրբ Հոգին թէեւ երբեմն բնական խառնուածքն ալ կը փոխէ, բայց ընդհանրապէս Անիկա կը պահէ զայն՝ միայն թէ նախ կը մաքրէ, կը գտնէ եւ կը սրբացնէ զայն: Պետրոս պէնտէկոստէէն առաջ ունէր կրակոտ, խիզախ, յառաջ նետուող խառնուածք, որ շատ օգտակար է հինը տապալելու եւ նորին հիմը դնելու համար: Սբ. Հոգին այդ խառնուածքը չջնջեց, ընդհակառակը զայն աւելի զօրացուց՝ վերցնելով զայն տկարացնող մեղանշական տարրերը, — յանձնապատանութիւնը, փառամոլութիւնն ու անձնասիրութիւնը, — եւ նուիրելով զայն Քրիստոսի ծառայութեան, ատով դարձաւ Պետրոս եկեղեցւոյն վէմը:

Յովհաննէս չունէր նոյն խիզախ ոգին՝ դէպի արտաքին գործունէութիւն: Բայց ասոր փոխարէն անիկա տէր էր այնպիսի խառնուածքի մը, որ զինքը կը մղէր՝ բանի մը խորը դիտելու, ճշմարտութիւնը խուզարկելու եւ տաք սրտով փարելու սիրոյ առարկային: Այս էր զաղտնիքը որ նա արդէն Զատիկէն առաջ ուրիշ ոեւէ առաքեալէ աւելի լաւ ճանչցաւ Յիսուսը, նուիրուեցաւ Անոր եւ դարձաւ Անոր ամենէն մտերիմ բարեկամը:

Բայց պէնտէկոստէէն առաջ Յովհաննէսի այդ ճանաչողութիւնն ու նուիրումը դեռ շատ թերի էին, քանզի անոր մաքին վրայ դեռ կը ծանրանար տգիտութեան խաւարը եւ սիրան ալ կաշկանդուած էր անձնասիրութեան շղթայով: Ինչպէս իր բոլոր աշակերտակիցներուն, նոյնպէս իրեն համար Յիսուսի խօսքերը դեռ անհասկնալի առակներ էին: Ընթերցողը թող մտադրութեամբ կարդայ Յովհ. Բ. 24, 22, Է. 37-39, Ժ. 6, ԺԲ, 32, 33, ԺԴ. 5, 8, 22, ԺԶ. 17, 25, եւ լաւ պիտի ըմբռնէ այս իրողութիւնը:

Սակայն Պէնտէկոստէէն յետոյ ոեւէ առաքեալէ աւելի իր վրայ կատարուեցաւ Յիսուսի խոստումը. — Միխթարիչը, Սուրբ Հոգին... ձեզի բոլորը պիտի սորվեցնէ եւ ինչ որ ձեզի ըսի, միաքերնիդ պիտի բերէ. և. Երբ Ինք

ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի... Անիկա զիս պիտի փառաւորէ» (Յովհ. ԺԴ. 26, ԺԶ. 13, 14): Այս խոստման համաձայն Սուրբ Հոգին ցրուեց Յովհաննէսի աչքերուն առջեւ տարածուած մութ մարախուղը, անոր յիշեցուց, բացատրեց ու հասկցուց Յիսուսի խօսքերն ու զործերը, բացաւ անոր ուշիմ միտքը՝ արծուի սրատեսութեամբ թափանցելու իր փնտռած ճշմարտութեան խորը եւ Քրիստոսի կոչմանն ու էութեանը գաղտնիքին, սրբացուց անոր բնական ու տաք սէրը՝ բուրանուէր սրտով պաշտելու իր Տէրը եւ կարողացուց զայն՝ իր գրչովը — որպէս թէ վրձինով — տալու մեզի Յիսուսի զործերուն ու կեանքին պատկերը, այնքան կենդանի, իրական, վա՛ռ ու փառաւոր գոյներով, որքան չէ յաջողած ուրիշ ոչ մէկ Աւետարանիչ:

Բնականաբար Աստուածաշունչի բոլոր գիրքերն ալ թանկարժէք են, իրենց անհրաժեշտ տեղն ունին, բայց եթէ անոնցմէ միոյն առաջնութիւն տալ ուզենք, նախապատուութիւնը պիտի շահէր Յովհաննու Աւետարանը. քանզի հոն գրուած են Յիսուսի այն ամէն խօսքերն ու «նշաններն» եւ Անոր կեանքի այն ամէն պատմութիւնները, որոնք բաւական են՝ փնտռող հոգին առաջնորդելու հաւատքի թէ «Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին», եւ այդ հաւատքին միջոցաւ յաւիտենական կեանքին տիրանալու Ի. 34:

Եթէ չեմ սխալիր, Թօբին էր որ անկեղծ տարակուսողներուն յաճախ կը թելադրէր Յովհաննու Աւետարանը կարդալ, եւ իրաւունքով: Քանի՛ մոլորածներ իրենց Հօրը տունը դարձած են, անստուգութեան խաւարին մէջ թափառող քանի՛ խաւարամած մտքեր ճշմարտութեան լոյսը գտած են, քանի՛ սիրոյ ծարաւի սրտեր սիրոյ աղբիւրին, ու նուաղած անօթիներ կենաց հացին, եւ քանի՛ մեռելալներ յաւիտենական կեանքի առաջնորդուած են, երբ ճշմարտութեան ամէն գնով հնազանդելու առաջադրութեամբ մըտածած են սա խօսքերուն վրայ, «Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը. մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ Ինծմով... Ես եմ աշխարհի լոյսը, ան որ իմ ետեւէս կուգայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ... Այն ջուրը զոր Ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսիդին ջուրի աղբիւր մը, որ յաւիտենական կեանքի համար կը բղխէ... Ես եմ կենաց հացը... Ես եմ յարութիւնը ու կեանքը, ան որ Ինծի կը հաւատայ՝ թէ եւ մեռնի, պիտի ապրի... Աստուած այնպէս սիրեց աշխարհը,

մինչեւ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. ԺԴ. Ը. 12, Դ. 14, Զ. 35, ԺԱ. 25, Գ. 16):

Ճշմարտասէր բարեկամս, դուն ալ կարգաւ սոյն համարները, բայց ոչ, Յովհաննու Աւետարանին բոլոր համարները, զլուխները, վասնզի անոնք ամէն ալ վսեմ ու կենսական ճշմարտութիւններ են, զեղեցիկ աղամանդներ են՝ մէկը միւսէն թանկարժէք: Կարգաւ Աւետարանը կրկին ու կրկին, տարին զէթ մէկ անգամ, եւ անոր հետ միասին Յովհաննու Ա. թուղթը եւ Յայտնութիւնը: Ասոնք երեքը միասին ամբողջութիւն մը կը կազմեն: Աւետարանը հրաւէր մըն է մեզի կենդանի հաւատքի, թուղթը սիրոյ, եւ Յայտնութիւնը՝ յաւիտենական յոյսի:

Կարգաւ ու զարմացիր թէ ինչպէս կարողացաւ գալիլիացի անուս ձկնորս մը դիտել այնքան խորունկ մարդու եւ Աստուծոյ սրտին. գտնել վսեմ ճշմարտութիւններ ու տալ մեզի այնպիսի գրութիւններ, որոնցմէ 1900 տարիներէ ի վեր լոյս, կեանք ու սէր կը հոսի թէ պարզուկ անուսին եւ թէ իմաստուն գիտնականին համար: Կը հոսի ու չսպառիր ու պիտի չսպառի մինչեւ աշխարհի վերջը:

Սակայն զարմանալու ալ պէտք չկայ, միայն միտք բեր թէ անիկա Յիսուսի հետ էր, Անոր կուրծքին վրայ ինկաւ ու Անկէ սորվեցաւ. միտք բեր նաեւ թէ անիկա ինքզինքը կատարեալ հաւատքով ու հնազանդութեամբ սիրոյ, ճշմարտութեան ու հանճարի Հոգւոյն յանձնեց:

Ըսինք արդէն թէ Յովհաննէս ի ծնէ դիտող, խուզարկող, ճշմարտութեան ծարաւի միտք՝ և սիրոյ կարօտ տաք ու փափուկ սիրտ ունէր, Բայց ատ թանկագին պարզեւները անպտուղ պիտի մնային, եթէ Սուրբ Հոգին զանոնք չմաքրէր, չսրբացնէր ու չզօրացնէր: Միայն Անոր ներգործութեամբն էր որ ձկնորս Յովհաննէսը ամենէն խորունկ աստուածաբանը եւ արծուատեսիլ մարդարէն եղաւ:

Այսպէս, կը տեսնենք թէ Քրիստոսի Հոգին չսպառեր անհատականութիւնը, մարդիկը մէկ կաղապարէ չթափեր, զանոնք անգոյն զանգուածի չվերածեր: Ընդհակառակը, Անիկա ամէն մարդու մէջ կը վերականգնէ անհատականութիւնը: Հոս ալ կը ճշմարտի Յիսուսի խօսքը, որ կ'ըսէ, «Ով որ իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա»: Վկայ կ'ուզէ՞ք: Ահա Յովհաննէսը, Պետրոսը և Պօղոսը: Երեքն ալ Քրիստոսի առաքեալներն են, ծառաներն են միեւնոյն Տէրոջ: Սակայն

որքան տարբեր են մէկ մէկէ եւ ի՛նչ զօրաւոր անհատականութիւններ: Յիսուսի յանձնուելով անոնք չկորսնցուցին իրենց անձը. կորսնցուցին միայն մեղքը, որ կը մեռցնէ ճշմարիտ, աստուածահաճոյ անհատականութիւնը, եւ գտան այն մարդը, որ նման է Արարչին ստեղծած նախապատկերին:

Ահա իր անհատականութիւնը գտնելու ճամբան նաեւ մեզի համար: Որքան կատարեալ ըլլայ մեր հաւատքը Յիսուսի վրայ, որքան անթերի մեր հնազանդութիւնը Անոր Հոգւոյն ձայնին՝ այնքան զօրաւոր է մեր անհատականութիւնը:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Ո՞ՐՆ Է ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԾԱԳՈՅՆ ԳԼՈՒԽԸ

Այս հարցումը ուղղուած էր աշխարհի մեծագոյն Ս. Գրոց ուսուցիչներէն ոմանց, ամերիկեան հոգեւոր պարբերաթերթի մը կողմէ: Այդ անձերէն իւրաքանչիւրն իր նախասիրած գլուխն ու այդ ընտրութեան համար իր պատճառները զրկած է թերթին. եւ մենք այդ պատասխանները ամփոփելով կը ներկայացնենք «Բանբեր»ի սիրելի ընթերցողներուն, որոնցմէ շատեր վստահաբար իրենց ալ նախընտրութիւնը պիտի գտնեն այդ գլուխներուն մէջ, իսկ ուրիշներ անոնց արժէքը առաւել եւս գնահատել պիտի սորվին, անոնց մէջ պահուած գանձերը գտնելու համար:

Վերոյիշեալ թերթը հարցումին մասին գրելով, ի մէջ այլոց կ'ըսէ. —

«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, եւ բոլորը օգտակար է, բայց եւ այնպէս կարգ մը մասեր մեզի համար աւելի արժէք ունին, որովհետեւ Սուրբ Հոգին անոնցմով կ'արտայայտէ այնպիսի ճշմարտութիւններ որ մեր կեանքին համար ամենաէական տեղը կը բռնեն: Ոմանք չեն կըրցած ոեւէ գլուխ մատնանշել, որովհետեւ ասիկա կը նմանի ծնողքի մը ուղղուած հարցումին, թէ իրենց ո՞ր գաւազը ամենէն շատ կը սիրեն:

Լ. Ս. Շէյֆըր, Նախագահի ճալատի աւետարալ, Նախան Աստուածաբանական գօլէճին կ'ըսէ — Սուրբ Գրոց մէջէն չփրկուած անձի մը եւ փրկւածի մը ընտրած գլուխները իրարմէ տարբեր պիտի ըլլային: Քանի որ եւ Աստուծոյ անհուն շնորհքով փրկուած եմ, իմ բնտրութիւնս կ'ընեմ որպէս մէկը՝ որ կրնայ մտնել այդ շնորհքին ճոխութեանց մէջ. թէեւ շատ մը գլուխներ նախման օրհնութիւններ ունին, ինչպէս. Եփս.

Ա. եւ Հոով. Ա. բայց ոչ մէկը այնքան ճոխ է Հայր Աստուծոյ, Որդին Աստուծոյ եւ Հոգին Սուրբ Աստուծոյ հետ իմ ունեցած օրհնեալ եւ յաւիտեական յարաբերութեանս գիտութենէ զերազանց փառքին յայտնութեամբը, որքան Յովհ. Ժէ. գլուխը:

Չ. Բ. Էրումէն, փրէսմերն Աստուածաբանական Յեմարանէն, կ'ըսէ — Յովհ. ԺԳ. գլուխը թերեւս ամենէն ծանօթ եւ շատ սիրուած գլուխն է Սբ. Գրոց մէջ: Ան կը ներկայացնէ աստուածային Փրկիչ մը Որ մեռաւ ու յարութիւն առաւ, Որ երկինք համբարձաւ, Որ իր հոգիով ներկայ է յաւէտ եւ Որ օր մը պիտի գայ նորէն: Փրկիչը աննման քաղցրութեամբ կը վստահացնէ իրեն հետեւողները թէ մահուամբ եւ յարութեամբ Ինք իր Հօրը կը վերադառնայ: Արդարեւ բոլոր մարդոց համար Ան է միակ ճամբան որ Հօրը կը տանի, զի Ինքն է «Ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը»: Ան կը խոստանայ իրեն վստահողներուն թէ ինչ որ իր անունով խնդրեն՝ Հայրը պիտի ընէ: Կը յայտարարէ թէ Հայրը, Որդին եւ Ս. Հոգին հաւատացեալներուն հետ պիտի ըլլան, ուստի անոնց սիրտը պէտք չէ խռովի ու պէտք չէ որ վախնան: Ինք գացած է անոնց համար տեղ պատրաստելու Հօրը տանը մէջ: Ան նորէն պիտի գայ եւ գանձք քովը պիտի առնէ որպէս զի ա՛լ յաւիտեան միասին ըլլան:

Ճ. Մ. Կրէյ, Նախագահի Մուտի Պալատի ինսթի. թիւթի, կ'ըսէ — Ես մէկէ աւելի անգամներ չեմ ուզած այդպիսի գլուխ մը ցոյց տալ. ոչ թէ միայն որովհետեւ չեմ կրնար, այլ կերպով մը կը զգամ թէ չեմ համարձակիր այդպիսի բան մը ընել: Անշուշտ կը ներէք ինծի, չէ՞:

Հ. Ա. Ալբրնայտ, Կովիւ Շիգակոյի Մուտի Մէ. մօրիւլ Չըքչի, կ'ըսէ — Կրնամ անվարան ըսել թէ եթէ ինծի Ս. Գիրքէն միմիայն մէկ գլուխ ունենալ թուլատրուէր, պիտի ընտրէի Եսայ. ԾԳ. Ը: Կ'ընդունիմ որ առանց Ս. Գրոց ուրիշ մասերուն տուած լուսաբանութեան այս գլուխը շատ մը տեսակէտներէ անհասկնալի պիտի ըլլար, բայց եւ այնպէս Տէրը ճանչնալէս ի վեր այնքան բան արժած է ան ինծի համար որ ուրիշ որեւէ գլուխ չի կրնար անոր տեղը բռնել: Այս թանկագին համարներուն մէջ Սուրբ Հոգին սքանչելի կերպով Բրիտոտոսը յայտնած է ինծի:

Չ. Կ. Ռըմսլըյ, «Սընտէյ Սըրլ Թայմզ»ի խմբագիրը, կ'ըսէ — Հոովմ. Ը. գլուխը մասնաւորապէս թանկագին եղած է ինծի համար: Անոր ըսկիզբն է, «Ղառապարտութիւն չկայ», վերջաբանը՝ «Ղառապարտութիւն չկայ» եւ մէջտեղը՝ «պարտութիւն

չկայ»: Այս հրաշալի գլուխը կը պարզէ Աւետարաններու փրկութեան ծրագիրը, ազատութեան եւ յաղթութեան կեանքը, բնական մարդուն անյոյս վիճակը եւ վերստին ծնածին արդարութիւնը, հաւատացեալին մէջ Քրիստոսի եւ Ս. Հոգւոյն բնակութիւնը, Աստուծոյ Հայրութիւնը, Սբ. Հոգւոյն բարեխօսութիւնը, մարմնոյն յարութիւնը եւ Քրիստոսի զալստեան օրհնեալ յոյսը, մեզի համար ամէն բաներուն բարիի գործակից ըլլալը, քրիստոնեայ կեանքին բոլոր ժամանակները՝ անցեալը, ներկան ու ապառնին, եւ ամենէն զըլուխը՝ փառապանծ յաղթութեան երզը՝ թէ քաժանութիւն չկայ յաւիտեանս յաւիտենից «Աստուծոյ սէրէն» որ Քրիստոս Յիսուս մեր Տէրօշմով է»:

Ու. Հ. Հոթմըն, Նիւ Էօրքէն հիւվիւ մը, կ'ըսէ— Ես պիտի ընտրէի Երբ. ԺԱ. Ը, հաւատքի կարեւորութեան եւ զօրութեան մասին անոր զարմանալի յայտարարութիւններուն համար: Հաւատքը ամբողջ Ս. Գրոց բանալին է. եւ Երբ. ԺԱ. Ը հաւատքին կատարած գործերուն գիտելի մէկ ամփոփումն է: Մարդոց միջեւ եղած տարբերութիւնը մտքի կամ մարմնի տարբերութիւն մը չէ, այլ հաւատքի. ոմանք չեն հաւատար, ուրիշներ կը հաւատան: Արբհամ հաւատաց, ո՛չ թէ Աստուծոյ գոյութեան միայն, այլ Աստուծոյ ըսածին:

Ս. ֆ. Մէքլէնքէն, հիւվիւ Հօլիվուտի մէջ, կ'ըսէ— Ես կը կարծեմ թէ Ա. Կոր. ԺԵ. Ը մեծագոյն գլուխն է Ս. Գրոց մէջ: Աստուծոյ շնորհքին ամբողջ Աւետարանը հոն ամփոփուած է ուրիշ տեղէ տեղէ աւելի: Յիսուս Քրիստոսի յարութեան ջախջախիչ իրականութիւնը հոն ներկայացուած է տրամաբանական, կանոնաւոր կերպով մը: Քրիստոսի մեծագոյն թարգմանը հանդիսացող մարդուն դարձին կեդրոնական, պատմական իրողութիւնը յստակօրէն յիշուած է: Յիսուս Քրիստոսի երկրորդ զալստեան ատեն պատահելիք զէպքերուն կարգը արձանագրուած է: Հաւատացեալին եւ անհաւատին յարութեան կերպն ու մէթոքը բացատրուած է: Յիսուս Քրիստոսի գլուխ ըլլալը շեշտուած է: Եկեղեցիին յոյսն ու յափշտակութիւնը յայտնուած են:

Տ. Մ. ֆէյմըն, «Թիթ Տօն» խմբագիրը, Լոնտոն, կ'ըսէ— Մեր կեանքին տարրեր շրջաններուն մէջ մեր հոգիին պէտքին համեմատ, Ս. Գրոց այսինչ մասը աւելի կը խօսի մեր սրտին քան մէկ ուրիշ մասը: Ս. Հոգին կը գործածէ ինչ որ կը կամենայ: Ուստի անկարելի է ընտրել Ս. Գրոց միմիայն մէկ մասը որ միշտ գերազոյն տեղը բռնէ մեր սրտին մէջ: Հաւանաբար Ա. Կորն. ԺԳը Աստուածալին է եւ մեզմէ միշտ զերիվել: Սա-

կայն թերեւ Ս. Գրքին ո՛րեւէ մէկ մասը այնքան խորապէս եւ տեւականօրէն չէ յուզած զիս (յաճախ արտասուելու աստիճան), որքան Յայտնութեան է. գլխուն վերջին կէսը: Դրախտ է անիկա:

Տ. Կ. Պարնհաուս, «Րէվիւէյշըն» խմբագիրը կ'ըսէ— Հոով. Ը. գլուխը պիտի ընտրէի ես: Ան կ'ըսէ ինծի թէ իմ դատաստանս անցած է. հ. 1: Ան յարուցեալ Քրիստոսը կը ցուցնէ ինծի որպէս իմ յաղթութիւնս. հ. 2-4: Ան աշխարհի կորսուած վիճակը կը յայտնէ. հ. 5-8: Մարմնաւոր յարութիւն կը խոստանայ ինծի. հ. 11: Աստուծոյ հետ հաղորդութեան կերպը կը ցուցնէ. հ. 14, 15: Ինծի ապահովութիւն կուտայ. հ. 16 եւն: Ինծի կը ստրկեցնէ թէ պատահականութիւններն անկարելորդ են. հ. 18, եւ ամէնը իմ բարիքիս համար կարգադրուած են. հ. 28: Ան երկրին փրկութիւն կը խոստանայ. հ. 19-25: Ան Սբ. Հոգւոյն մեր մէջ բնակութեան եւ աղօթքի կեանքին մասին կը խօսի. հ. 26, 27: Ինծի կը ցուցնէ թէ Աստուած զիս սիրած էր ի յաւիտենից եւ յաւիտեանս: հ. 29, 30: Ան զիս յաւիտեան Աստուծոյ կը կապէ շղթայով մը, որուն առաջին օղակն է՝ կանխագիտութիւն, երկրորդը՝ նախախնամութիւն, յետոյ՝ կոչում, արդարացում եւ փառաւորում: Ան Քրիստոսով անուան բարիք կը հայթայթէ ինծի. հ. 32: Ինծի կ'ըսէ թէ զիս ամբաստանող կամ ինծի դէմ մեղադիր եղող մէկը չկայ, եւ սեղ դատաստան գոյութիւն չունի որ զիս դատէ, քանի որ Քրիստոս ինծի համար ամէն բան ըրած է. 32-34: Ան զիս կը ծածկէ Քրիստոսով, Որ Աստուծոյ մէջ է, այնպէս որ ես յաւիտեան Անորն եմ. հ. 35-39:

Հաւաքեց Յ. Ք.

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԵԼ

Այս պատմութիւնը թէեւ շատ կարճ է Սբ. Գիրքին մէջ՝ բայց շատ լաւ դասեր ունի եղբայրներու համար որոնք միասին կ'ապրին:

Աբել

Աբել Կայէնի պզտիկ եղբայրն էր:

Աբել ոչխարներու հովիւ եղաւ:

Աբել Աստուծոյ ընծայ քերաւ առջինեկ ու պարարտ ոչխարներ:

Աստուած Աբելի ու անոր ընծային նախեցաւ (հաւնեցաւ):

(Աստուած նախ Աբելի՝ (անոր սրտին) հաւնե-

ցաւ, յետոյ Աբելի ընծան հաւնեցաւ):

Ուրիշ տեղ մը կը կարդանք թէ Աբել այս ոչ-խաբները հաւատքով զոհ ըրաւ. երբ. ԺԱ. 4:

Ասոր վրայ Կայէն նախանձեղով իր Աբել եղբայրը սպաննեց:

Չորս հազար տարի յետոյ՝ Յիսուս Աբելի «արդար Աբել» անունը տուաւ, Մատթ. ԻԳ. 33:

Եւ վերջապէս՝ գրուած է թէ՝ Յիսուսի արիւնը Աբելի արիւնէն աւելի աղէկ կը խօսի երբ ԺԲ. 24. այսինքն Աստուած Կայէնը պատժեց Աբելի արիւնը թափելուն համար, բայց Աստուած մեզի կը ներէ Յիսուսի արիւնը թափելուն համար:

Կայէն

Կայէնի զործերը չար էին Ա. Յովհ. Գ. 12:

Կայէն բարկացոտ էր:

Կայէն իր երեսը կախեց Աստուծոյ առջեւ:

Կայէն իր եղբայրը չսիրեց:

Հապա անոր նախանձեցաւ, ատեց եւ սպաննեց զայն:

Կայէն Աստուծոյ սուտ խօսեցաւ:

Աստուած Կայէնը պատժեց:

Կայէն չարէն, Սատանայէն էր. Ա. Յովհ. Գ. 12

Վա՛յ անոնց որոնք Կայէնի պէս կ'ըլլան,

Յուդ. 11:

Ան որ իր եղբայրը չսիրեց, Աստուծմէ չէ:

Ան որ իր եղբայրը չսիրեց, մահուան մէջ կը մնայ:

Ով որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան է:

ՍԻՐԵԼԻՆԵՐ, ՄԻԿԱԶՄԻԿ ՍԻՐԵՆՔ:

Ա. Յովհ. Գ. 10, 14, 15, Դ. 7, 8,

Վասնզի սէրը Աստուծմէ է:

Վասնզի Աստուած սէր է:

.....

ՀԱՍԿԱՔԱՂ

ԵՐԱՆ՝ ԱՆՈՆՑ ՈՐ ՍՐՏՈՎ ՄԱՔՈՒՐ ԵՆ

Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչ մը պատկերներէն մէկուն Մատթ. Ե. 1-12 համարները (լերան վրայի քարոզին երանութիւնները) կարդացնելով անոր հարցուց, Յիսուսի երանի տուած առաքիւնութիւններէն ո՞ր մէկը կ'ուզէր ընտրել ինքը: Մանուկը մտածեց ու ըսաւ, «Մաքուր սիրտ մը պիտի ընտրէի»:

— Ինչո՞ւ համար, հարցուց ուսուցիչը:

«Որովհետեւ եթէ մաքնուր սիրտ ունենամ՝ այս պիտուն մէջ յիշուած բոլոր շնորհքներն ալ ունեցած կ'ըլլամ», պատասխանեց մանուկը:

Անիկա իրաւունք ունէր: Սիրտն է որ նախ

պէտք է վերանորոգուի, վերածնի, վասնզի «Կեանքի աղբիւրները սրտէն կը բղխին», պէտք է ամէն զգուշութիւնով պահել զանիկա. Սուսկ Դ. 23:

ՄԱՆԿԱՆ Մ'Ը ՓԱՓԱՔԸ

Քանի մը մանուկներ միասին կը խաղային Անոնցմէ մէկը ընկերներէն իւրաքանչիւրին հարցուց, «Ամենէն շատ ի՞նչ բան ունենալ չը փափաքիս»:

Ոմանք պատասխանեցին, «Խաղալիքներ, գիրքեր, պատկերներ»: Ուրիշներ ըսին, «ձիեր կառքեր, հագուստներ եւն»:

Տասը տարեկան պզտիկ տղայ մըն ալ պատասխանեց, «Իմ ամենէն մեծ փափաքս է Աստուծոյ դէմ մեղք չգործել»:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԸԼԼԱՅ

Լուսիա անունով պզտիկ աղջիկ մը երկար ժամանակէ ի վեր հիւանդ էր: Օր մը կին մը անոր հարցուց, «Լուսիա, չե՞ս փափաքիր շուտով առողջանալ եւ երթալ ընկերներուդ հետ խաղալ»:

Լուսիա, վայրկեան մը մտածելէ յետոյ ըսաւ, «Աստուած ինծմէ աւելի լաւ գիտէ թէ ինծի ի՞նչ բան պէտք է: Ես բանի մը չեմ փափաքիր, հապա Աստուծոյ ուզածը կ'ուզեմ, թող Անոր կամքը ըլլայ»:

.....

ԵՐԿԻՆՔ ԵՐԹԱՂՈՒ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ՔԱՅԼ

Միայն երե՞ք: Եւ ինչ՞պէս:

Ա. Ինքզինքէն հրաժարիլ եւ դուրս ելլել: Բ. Քրիստոսի երթալ: Գ. Քրիստոսի միջոցով երկինք երթալ: Յիսուս կ'ըսէ, «Ես եմ դուռը», ըսած է նաեւ, «Ինծի եկէք». ուստի երկինք երթալու համար պէտք է ինքզինքէն հրաժարիլ — դուրս ելլել եւ Քրիստոսի միանալ: Խաչին վրայի աւագակը միտքդ բեր: Փրկութիւնը շատ պարզ է: Աստուած մեղատուրը կը սիրէ ու կուտայ, մեղատուրը պարտի հաւատալ եւ ընդունիլ:

Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Ru St Savournin - Marseille

ՀԱՅ ԱՍԻՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Նաբաժաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' Յ. Ն. 'Լազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շաբաթամիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի, Սէն Ժիւլիէնի, Սէնթ Անժուանի, Սէնթ Մարկրիտի, Սէն Ժէրոմի Պոլովար Օսոի մէջ):

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ.—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ Բրոն. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Boury les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼԻՅՕՆ.— Հովիւ' Պատ. Ժ. Պարուսեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷՅՐԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պատարեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine.)

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournefort Paris 5,

Metro Mouche Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանաստեղծիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-
դութեան Քրիստոնէական Միութիւն

բանաստեղծիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին աղօթածողով
Rue des Brechets, Alfortville

ՄԵՐ ՔՈՎ ՊԱՏՐԱՍ ԿԱՆ ՄԻՇՏ

Ա) ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Բարի Հովիւր
2. Դուռը զարնող Փրկիչը
3. Յիսուս հովն ու ծովը կը համադրուեցնէ
4. Մարիամ եւ Մարթա
(մեծութիւն՝ 37 սմմ. երկ. եւ 27 սմմ. լայն)
Գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով
5. Տաւը կոյսերը
(մեծութիւն՝ 29 սմմ. երկ. եւ 26 սմմ. լայն)
Գին՝ 4 ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով
6. Լայն եւ նեղ Տաւրան.
(մեծութիւն՝ 63 սմմ. երկ. 50 սմմ. լայն)
Գին՝ 6 ֆր. ձեռքէ, թղթ. ծախքով 7

Բ) ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

որոնց խաղաքանդիւրին վրայ կայ հետեւեալ համարներէն
մին՝ Յովն. Գ. 16, Գործ. Գ. 12, Փիլ. 7, 8, Ա. Յովն. Գ. 10:
(մեծութիւն՝ 16 սմմ. երկ. 11 սմմ. լայն)
Գին՝ մէկ ֆր. Թղթաւորական ապագրանքը 25էն պա-
կաս ըլլալու չէ:

Գ) ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՔԱՐԿԵՐ

1. Մնեկեան քարգեր, (ծաղկանկար կամ պատկեր մը փրկ. չին մանկութեան կեանքէն, իրեն յարմար Սր. Գրական ոսկեղէն համարով մը տնտեսած)
2. Նոր տարուան քարգեր, (ծաղկանկարի մը վրայ նոր տարուան բարեմաղթութեան հետ նաեւ Ս. Գրական յարմար ոսկեղէն համար մը):
3. Զատիկուան քարգեր, (ծաղկանկար, Զատիկուան բարեմաղթութեան հետ նաեւ Սր. Գրական յարմար ոսկեղէն համար մը):

Ֆրանսայէ դրամական աւարտմանը համար մեր Compte Chèque Postal'n է
H. N. Ghazarossian, 182, 53 Marseille.

Բոլոր ապագրանքները կանխիկ ըլլալու են:

մաղթութեան հետ նաեւ օրուան յարմար Սր. Գրական ոսկեղէն համար:

Դ) ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓՐԿՉԻՆ ԿԵՆՆՔԷՆ (քարդի ձեռով)

Գին՝ տուելէն ձեռքէ վեց ֆրանք, Թղթաւորական ապագրանքներ 25էն պակաս ըլլալու չեն:

Ե) 12 տեսակ գեղեցիկ ծաղկաւոր խաղեր, Ս. Գրական խօսքով մը.— Միայն Յիսուս, իմ շնորհքս հերիք է քեզի քեզ յաւիտեանական սիրով սիրեցի, Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր, Զանքի մէջ Թուլասիրտ չըլլաք, եւայլն:

Գին խաղաքանդիւրը 50 սանթ, կամ 3 սէնթ:
Թղթաւորական ապագրանքներ 25 էն պակաս ըլլալու չեն:

Զ) ՊԱՏԻ ՄԱՂԿԵՊԱՏԿԵՐՆԵՐ

ա. Զորս տեսակ: Մեծութիւն՝ 27 սմմ. երկ. 20 սմմ. լայն
Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Յետուայ ի Գ. 15. 2) Գաղ. Ե. 22, 23. 3) Կող. Գ. 4, 4) Ա. Կորնթ. Ժ. 57:

բ. երկու տեսակ ձուածեւ ծաղկապատկերներ: Մեծութիւնը 27 սմմ. երկ. 16 սմմ. լայն: Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Ա. Յովն. Ա. 7. 2) Յայտ. Բ. 10:

Գին՝ խաղաքանդիւրը 3 ֆր. թղթ. ծախքով 3, 50:

գ) երկու պատկերներ: Մեծութիւն՝ 33 սմմ. երկ. 23 սմմ. լայն:

1) Մեր քաղաքականութիւնը. Սր. Գրական համարներ. Փիլ. Գ. 20 եւ երբ. Ժ. 13, 14: Եւմ Հորս տունը վերն հոգալու ընտանեկան երգով:

2) Սպասող ծառան: Նայն մեծութեամբ: Սր. Գրական համար՝ Վուկ. Ժ. 36: Եւմ առ դէմ Փրկիչ Տէրոջս հետ երգով:

Գին՝ խաղաքանդիւրը 4 ֆր. թղթ. ծախքով 4, 50

ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐԴԵՐԸ ՓՈԽՈՎ ԱՊՍՊՐԵՑԷՔ.